№ 64 ՇԱԲԱԹ ՄԱՐՏԻ 24

1907

ԵՐԵՍՈՒՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվանը 6 բուբլի. առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊԷԿՈՎ

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ». Базарная ул. д. Тамамшева № 16. Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և ազգ օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ՄՇԱԿ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ՆԵՐԿԱՅ 1907 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(35-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 բուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., մէկ ամսվանը 1 բուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրօպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 բուբլի։

«Մշակին» դրվել կարելի է ԹՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւնը)։ Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ կարելի է վճարել ՄԱՍ-ՄԱՍ։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱԳԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Մարտին, Ալէքսանդր, Իւղարեր և Յասմիկ Շաթիրեանները յայտնում են ազգականներին և բարեկամներին՝ առաջինները իրանց հօր, վերջինները իրանց սկեսրայրի՝

ՍԱՐԳԻՍ ԹԱԹԻՐԵԱՆԻ

մահը։ Յուղարկաւորութիւնը շաբաթ, առաւօտեան ժամի 10-ին, իր բնակարանից՝ Петербургская № 13՝ դէպի Թանդոյեանց եկեղեցին։ Թաղումը Աօջիվանքի գերեզմանատանը։

2—2

Այսօր, շաբաթ, մարտի 24-ին

ՆԱԶԱՐԵՐԻ ԴԱՆՁՈՒՄԵԱՆ ԴՕԼՈՒԽԱՆԵԱՆՑԻ

եւ նրա դստեր

ԱՆՆԱ (ԱՆՈՒՇ) ՍԱՐԳՍԵԱՆ ԴԱՒԹԵԱՆԻ

առաջինի մահվան քառասնօրեայ, երկրորդի մահվան տարեդարձի ասիթով կը լինի պատարագ և հոգեհանգիստ Զրկինեանց ս. Կարապետ եկեղեցում, որի համար յայտնում են առաջինի դուստրերը, փեսայ Առաքել Վարդապետանցը և թոռներ՝ Սարգիս և Միքայէլ Դաւթեանցները իրանց ազգականներին, բարեկամներին և ծանօթներին։ Պատարագը կը սկսվի ժամը 10½-ին։ Հոգեհանգիստը ժամը 12-ին։

1—1

Թիֆլիսի Հայոց Բարեգործական Ընկերութեան վարչութիւնը յայտնում է, որ այսօր առաւօտեան ժամը 11-ին, պատարագից յետոյ, Մողնու եկեղեցում լինելու է հանդուցեալի բարերար

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԽՈՒԴԱԴԵԱՆՑԻ

հոգեհանգիստը

1—1

Կիրակի, մարտի 25-ին, առաւօտեան 12 ժամին

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԹԱՏՐՕՆԻ ՇԻՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Լինելու է

ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

ԶԲԱՂՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ.

1) Վարչութեան պ. պ. քարտուղարի և գանձապահի հաշիւը։

2) Զեկուցումն վարչութեան առաջիկայ թատրօնական սեզօնի մասին։

3) Ընտրութիւններ։

տ.) (23, 24, 25) 2—3

ԿԱՆԱՆՑ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Անաստասէվսկայա փողոց, տուն № 18, հեռախօս 966։

Հիւանդ կանանց ընդունելութիւնը ամեն ժամանակ նախորդ յայտարարութեան համաձայն։

Երեթեկ հիւանդների ընդունելութիւնը ամենայն օր ցերեկվայ ժամը 11—12, հետեւեալ բժիշկների ձեռքով.

Ա. Բ. Ֆիշէր.—երեքշաբթի, շաբաթ։

Ա. Գ. Բարսուկով.—չորեքշաբթի։

Ս. Գ. Շահ-Պարոնեան.—կիրակի, հինգշաբթի։

Ա. Ա. Նօվիցկի.—երկուշ. ուրբաթ։

Երեխաների հիւանդութիւնների համար Ն. Զ. Ումիկօվը հիւանդ երեխաներին ընդունում է երկուշաբթի և հինգշաբթի օրերը, 2—3 ժ.։

Հիւանդանոցին կից կատարվում են քիմիկո-միկրոսկոպիական հետազօտութիւններ՝ մէզի, խորխի և այլն։

Ծծմայրերի քննութիւն, ծաղկի պատուաստումն և այլն։

(հ. շ. ե.) 20—50

ՇԱԲՈՒՆԱԿՎՈՒՄ Է

„ՍԱՓՐԻՉ“

լուսոր, սատիրիկ-սիմվոլիք

ամսաթերթի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Լոյս տեսաւ

VI-րդ համարը,

որը և ուղարկվեց բաժանորդներին նաև

„ԱՆԻ“

հրատարակչ. ընկեր. բաց նամակների I սերիան, 8 հատ, գինն է 60 կոպ.։

Բաժանորդներին ուղարկվեց ձրի իբրև «Սափրիչի» 1 պրէմիան։

Տարեկան բաժանորդագրվելիս է պրէմիայով 2 բուբլի, իսկ Անդրկովկասեան երկրի և արտասահմանի համար 2 բուբլի 50 կոպ.։

Հասցէ՝ С. П. Б. Казанская 46 18.

«ՍԱՓՐԻՉ»-Ի խմբագրութիւն

ե. շ. տ. 14—25

ԲԺԻՇԿ

Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

ՄԱՍՆԱԳԷՏ

սիֆիլիս, միզային, վեներական եւ մրծու հիւանդութիւնների։

Ընդունում է ցերեկ. 1—3 ժ., երեկ. 6—8 ժ.։ Սօլօլակ, Բեհրութեան փող. № 33։

(տ. օ.) տ. 26—100

ԲԺԻՇԿ

Տ. Ա. ԻՍԱԽԱՆԵԱՆ

ՄԱՍՆԱԳԷՏ՝

ներքին եւ վեներական

հիւանդութիւնների

Ընդունելութիւն { առաւօտ. 10—12 ժ. երեկոյեան 5—7 ժ.

Սօլօլակ, Սերգիեվսկայա 15, Փրիդօնօվի տունը։

տ. (չ.ու.շ.) 55—100

Հայոց Հայրիկը Օշականում

Մեծադիր հիսաքանչ գրաւիր, պատրաստված Ֆրանկֆուրտում, գինը 1 ր. 50 կ. ՎԵՐՀԱԿԱՆ ՀԱՅՐԻԿԻ 87-րդ մօտակայ տարեդարձի ասիթով (ապրիլի 4-ին). վաճառվում է այսօրվանից ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶԻ գրասենեակում, հատը 60 կ. մինչև ապրիլի 5-ը։

Հայ պարբերական բոլոր թերթերի բաժանորդների համար (եթէ ուղարկեն իրանց տպագրված հասցէները) ճանապարհածախսով և յատուկ պատրաստված այդ պատկերի համար խողովակներում—80 կ., նրանց համար, որոնք հայերէն ոչ մի թերթ չեն ստանում՝ 1 ր. 10 կ։ Ապրիլի 5-ից անխիտ ամենքի համար դարձեալ իր իսկական գնով՝ հատը 1 ր. 50 կ. վերադիր վճարով չէ ուղարկվում։ Հասցէն՝ Тифлисъ, редакція «Агбюръ-Таразъ».

տ. (հ. շ.) 2—5

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Բարոյական հաշուութիւն. Պարսկական շարժումը. Վերջին տեղեկութիւններ. Պետական Դումայի շուրջը. Նամակ Պետերբուրգից. Մթքեր և փաստեր. Մամուլ. Տեղեկութիւններ գաւառից. Թիֆլիսի գործակատարների ժողովում. Թատրօն և երաժշտութիւն. Տեղեկատու. Զանգեզուրի. Նամակ Երևանից. Յանցաւոր լռութիւն. Պետական Դումա. Ներքին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Բումնիայի պօգրոմների ասիթով. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԲԱՐՈՅԱԿԱՆ ՀԱՇՄՈՒԹԻՒՆ

I

Կրաւորական մի լինէք։

Այս է այն յորդորը, որ կարևոր ենք համարում ուղղել մեր հասարակութեան ներկայացուցիչներին, մեր փոքր ու մեծ գործողներին։

Կրաւորական մի լինէք, այլ ցոյց տուէք գիտակցական վերաբերմունք դէպի կեանքի երևոյթները, ստանձնեցէք ներգործական դեր, հետևեցէք ձեր համոզմունքների թելադրութիւններին և աշխատեցէք իրագործել կեանքի մէջ այն, ինչ որ դուք համարում էք արդար, լուսաւոր և օգտաւէտ։

Մեր հասարակութեան ամենամեծ ցաւերից մէկը ներկայումս հէնց այն է, որ մարդիկ ինքնուրոյն չեն պահում իրանց, որ մարդիկ բոլոր ժամանակը համակերպվում են և աշխատում են յարմարվել այս կամ այն ոյժին, այս կամ այն ազդեցութեան։

Համակերպվել, համակերպվել և անվերջ համակերպվել—դա մի դժբաղդութիւն է, մի սարսափելի չարիք, որին մատնել է իրան մեր հասարակութիւնը և այդպիսով չքացրել իր անհատականութեան արտայայտութիւնը։

II

Ամեն օր, ամեն քայլափոխում մենք ականատես ենք՝ թէ ինչպէս մեր հասարակութեան մարդիկ իրանք իրանց ուրանում են, իրանք իրանց թաղում են ու ոչնչացնում։

Ահա մի խումբ մարդիկ, որոնք սարսափելի կերպով տանջված և չարչարված են տեղական ազդեցիկներից, օրինակ վաշխառուից, պաշտօնեայից, ենիչերից, գողից, աւազակից, ոստիկանից։ Բայց նրանք աւելի քան լուռ են, նրանք նոյն իսկ ցոյց են տալիս իրանց շնորհակալ իրանց հարստահարողներից, նրանք շողոքորթում են նրանց, ասնական ճաշեր են տալիս, ուղերձներ են մատուցանում և բանն այնտեղ է հասնում, որ սկսում են դժգոհ լինել այն անձերից, մամուլի այն օրգաններից, որոնք համարձակութիւն են ունենում մերկացնել իրականութիւնը, ցոյց տալ երբի սոսկալի վիճակը և դատապարտել անարժան մարդկանց արարքները։ Մենք կարող էինք մեր իրականութիւնից բազմաթիւ օրինակներ բերել մեր ասածները ապացուցանելու համար, բայց համարում ենք մեր ընդհանուր միաքը լինքնին պարզ, հասկանալի։

III

Երբ մի հասարակութիւն չունի այնքան քաջութիւն, որ սէր ու ատիտակը անուանի իրանց անուններով և արդարին և անարդարին դատի իրանց գործերով, այն ժամանակ այդպիսի հասարակութիւնը ոչ միայն ինքն է իր համար փորում կորուստի գերեզման, այլ և դժուարացնում է այն սակաւաթիւ խիզախների գործը, որոնք ասպարէզ են գալիս իրանց բողոքով, մերկացումներով և փրկարար քարոզներով։

Ժողովրդական կամքի հարազատ արտայայտութիւնը, քաղաքացու ձայնի լիակատար ազատութիւնը—ահա այն, ինչ որ կարևոր է ժողովրդական կեանքի շէմքը հաստատ հիմքերի վրա դնելու համար։

Եթէ ժողովրդի ազատ մտածողութիւնը վտանգված է, մենք պէտք է ամեն միջոց գործ դնենք նրան կանգնեցնելու իր իսկական դիրքի, իր վեհ կոչման բարձրութեան վրա։

Իսկ եթէ մի հասարակութիւն իր ներկայացուցիչներով կը շարունակէ կրաւորական դերի մէջ մնալ, նա չէ կարող լուսալ լաւագոյն ապագայի. նա ինքն իրան կը դատապարտի թմրութեան և կորուստի։

Ա. Քալանթար

ՊԱՐՍԿԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

II

Երէկ, մենք այն փաստը արձանագրեցինք, որ Պարսկաստանում դէպքերը արագօրէն սաստում են, բարդութիւնները սաստկանում են և թէ յեղափոխական շարժումը, օտարազգիների դէմ շարժումը, որ արծարծվում և բորբոքվում է ազիտատօրների ձեռքով, այնպիսի բնաւորութիւն և կերպարանք է ստանում, որ կարող է յանգել կամ պետական հարուածի Շահի կողմից և կամ ռուս-անգլիական միջամտութեան։

Թաւրիզից ստացված և այսօր տպված նամակները նոյնպէս հաստատում են մեր ասածը։

Ով ուշի ուշով հետևել է Պարսկաստանի կեանքին, վերջին 10—15 տարին, նա կը վկայէ, որ Իրանը հասաւ իր տնտեսական և քաղաքական քայքայման գագաթնակէտին Մուզաֆֆէրէդդին Շահի օրով։ Ոչ մի Շահ այնպիսի մեծ վնաս չը հասցրեց Պարսկաստանին, ինչպէս Մուզաֆֆէրը, թէև անգիտակցօրէն և հակառակ իր բարի կամքի ու բնաւորութեան։

Զուսնենալով ոչ իր հօր Նասրէդդինի փորձառութիւնը, աչալրջութիւնը, կրթութիւնը, ոչ նրա անյողդողդ և հաստատ կամքը, Մուզաֆֆէրը ընկաւ ագէտ, զօշաքաղ և ընչաքաղց մի կամարիլայի ձեռքը, որ գլխաւորապէս բաղկացած էր Թաւրիզի թուրքերից և որ սաստիկ ի չարն էր գործ դնում բարի և զիջող Շահի վստահութիւնն ու պարզամտութիւնը։ Այդ կամարիլայի թելադրութեամբ նա պաշտօնից հեռացրեց փորձված և երկրի կառավարութեան մէջ հմուտ Աթաբէկին, որ տասնեակ տարիներ գործել էր Նասրէդդինի ձեռքի տակ։ Մեծ վիզիրութեան պաշտօնին կոչվեց Ամին-Իսլէն, որ եւրօպականապէս քաղաքակրթված մարդ էր և կոչված էր գուցէ Պարսկաստանի վերաքննիչը հանդիսանալու, եթէ, գարձեալ կամարիլայի շնորհիւ պաշտօնակէ չը լինէր կարճատև սադրազամութիւնից յետոյ։ Նորից պաշտօնի կանչվեց Աթաբէկը, որը, սակայն դառնացած, և կամարիլային հաճելի դառնալու համար մի շարք այնպիսի ձեռնարկութիւններ կատարեց, որոնք արագօրէն նպաստեցին երկրի տնտեսական և ֆինանսական քայքայման և ընդհանուր դժգոհութիւն առաջ բերին ժողովրդի մէջ։ Այդ անպտղ ձեռնարկութիւններն էին երկու ռուսական փոխառութիւնները և բելգիացիների ձեռքը յանձնելը ամբողջ երկրի մաքսային, պօստային ու ֆինանսական կացութիւնը։ Ռուսաստանից փոխ առած միլիօնները փոխանակ գործադրելու երկրի վերաշինութեան և բարգաւաճման գործին, ծախսեցին Շահի և կամարիլայի ճանապարհորդութեան Եւրօպայում և հարստացրին անարժան ու պնակալէզ պալատականներին։ Իսկ այդ անգին միլիօնների տոկոսները վճարելու համար բելգիացիները աւելացրին մաքսային և այլ հարկերը, խիստ աննպաստ առևտրական դաշնագիր կնքեցին Ռուսաստանի հետ և բացի դրանից, իրանք ևս մի անգին բեռ դրին երկրի համար, ստանալով ահագին ռոճիկներ, քշելով ասպարէզից պարսիկներին և դրանով զրկելով զայրոյթը այն բազմաթիւ պաշտօնեաների, որոնք իրանց ապրուստը հայթայթում էին այդ պաշտօնով։ Ժողովուրդը ահռելի օրէն կեղեքվում էր, երկիրը աղքատանում էր, որպէս զի Շահը և իր կամարիլան զուարճանան Եւրօպայում և բելգիացի ֆինչին պաշտօնեաները, որոնք իրանց հայրենիքում տասնեակ բուբլիներ էին ստանում ռօճիկ, հարիւրներ և հազարներ ստանան Պարսկաստանում։ Աթաբէգի անհաբեսի սխալը այն եղաւ, որ թոյլատրեց այդ գեղծումները։ Երբ դժգոհութիւնը սաստկացաւ, երբ Աթաբէգը տեսաւ, որ կամարիլան անկուշտ է և ժրում է հիւանդոտ Շահին դէպի նորանոր արկածներ, նա հրաժարվեց, հեռացաւ և գնաց Եւրօպա ճանապարհորդելու։ Մեծ վեզիրութեան պաշտօնի կանչվեցին հետզհետէ շահզադէ Էյն-Դօվլէն և ծերունի Մուշիր-Դօվլէն, արտաքին գործերի մինիստրը, մի տգէտ և անընդունակ պարսիկ միրզա, որի ամբողջ արժանաւորութիւնը կայանում էր նրանում, որ ռուսաց բիւրօկրատիայի արարածն էր։ Բայց այդ երկու սադրազամներն ևս անկարող եղան կառավարել երկիրը և աւելի ևս նպաստեցին նրա քայքայման։ Մուզաֆֆէրը, միշտ կամարիլայի թելադրութեամբ, նորից ձգտեց դրամ ձեռք բերել մի նոր ճանապարհորդութիւն կատարելու համար։ Այդ միջոցին արդէն սկսվել էր երկրի մէջ յեղափոխական շարժումն թէ երկրի վատ կառավարութեան և թէ ռուս-եապոնական պատերազմի ազդեցութեամբ։ Վրա հասաւ և ռուս ազատագրական շարժումը։ Շահին հակացրին, որ դրամ կարելի է ձեռք բերել, տալով երկրին սահմանադրութիւն և մտցնելով պարլամենտ։ Արդէն մի ոտքը գերեզմանի մէջ, ցաւագար Շահը տեսաւ, որ փրկութեան ուրիշ ելք չը կայ և ստորագրեց այն ֆիրմանը, որով Պարսկաստանին խոստացվեց սահմանադրական և պարլամենտական կեանք։ Այդ նոր կեանքի արշալոյսին, մեռաւ Մուզաֆֆէրը և յաջորդեց երիտասարդ Մահմէդ-Ալի Շահը, որ վերհասատեց հօր խոստումները և հրովարտակը։

Պարլամենտը կամ ազգային մէջլիսը կեանքի կոչվեց։

Տեսնենք, ինչպէս գործեց նա։

Հ. Առաքելեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Բագու 22 մարտի

Երէկ, Քուռ-Կասպեան նաւաշնչութեան ընկերութիւնը Պարսկաստան ուղարկեց 2 նաւ բեռներով և ճանապարհորդներով. այսօր ուղարկում է 2 նաւ ևս։ Նաւատիներ ընտրված են բացառապէս մահմեդականներից։ Երէկ մեկնեց «Կավկազ և Մերկուրի» ընկերութեան «Ալէքսէյ» նաւը 700 ճանապարհորդներով։ Նաւին ուղեկցում է զինուորական «Արաքս» նաւը։

Հ. Գ.

—

Թէհրան 22 մարտի

Սաքզվարում յուզմունքները դադարեցին։ Փախած ռուսահպատակները վերադարձան 25 կօզակների հսկողութեամբ։ Իշխանութիւնները ազգաբնակութեան հետ ընդունեցին նրանց։ Պարսից կառավարութիւնը եռանդուն միջոցներ է ձեռք առնում մեղաւորներին պատժելու համար։

Հ. Գ.

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՇՈՒՐՋԸ

(Հեռագրով)

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 մարտի։ Նախահաշիվ մասնաժողովը բաժանվեց 8 բաժինների. առաջինը՝ կուլէրի նախագահութեամբ՝ քննելու է պետական փոխառութեան և ֆինանսների մինիստրութեան նախահաշիւները. երկրորդը՝ Կուլչին-Կարավայէվի նախագահութեամբ՝ քննելու է ծովային և զինուորական մինիստրութեան հաշիւները, երրորդը՝ Բոդիչէվի նախագահութեամբ՝ զբաղվելու է բարձր պետական հաստատութիւնների, Սինոդի, արդարադատութեան մինիստրութեան, պետական հսկիչի հաշիւների խնդրով, չորրորդը՝ Տարատինովի նախագահութեամբ՝ երկրագործութեան գլխաւոր վարչութեան հաշիւները, հինգերորդը՝ Ստրուվէի նախագահութեամբ՝ ներքին գործերի մինիստրութեան հաշիւները ստուգելով, վեցերորդը՝ Ֆէօդորովի նախագահութեամբ՝ ճանապարհների հաղորդակցութեան, երկաթուղիների վարչութեան հաշիւները, եօթերորդը՝ Ֆէօդորովի նախագահութեամբ՝ քննելու է արտաքին գործերի և առևտրի մինիստրութիւնների հաշիւները, ութերորդը՝ Բէյնի նախագահութեամբ՝ ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան հաշիւները։ Մասնաժողովը վճռեց նիստերին հրաւիրել և ոչ-պատգամաւոր մասնագէտ անձերի։

Անշարժ կայքերը պետական և հասարակական պէտքերին համար ստիպողաբար գործադրելուն վերաբերվող նոր օրէնքի նախագծի հիմնական կէտերը մշակելու համար, Սալօվի նախագահութեամբ՝ ճանապարհների հաղորդակցութեան մինիստրութեան մէջ կազմված է յատուկ մասնաժողով։

Դումայի 439 անդամներից ստացված գրութեան համաձայն, որ իրանք կուսակցութիւնների ժողովի են, Դումայի կազմը ներկայանում է այսպէս. աջակողմեանները—20 հոգի, հոկտեմբերականները—26, անկուսակցականներ—31, սահմ.-ռամկավարները—86, կօզակներ—18, լեհական կլօ—44, մահմեդականներ—26, աշխատաւորականներ, գիւղացիական դաշնակցութեան անդամներ և ուրաչացիներ—82, ժողովրդական սօցիալիստներ—13, էսէրներ—31, էսդէկներ—54։

Եկամի մասնաժողովի մեծամասնութիւնը կարծիք յայտնեց՝ քննել պետական հսկիչի հաշիւները ոչ միայն գանձարկային հաշուապահութեան վերաբերութեամբ, այլ և ծախքերը կատարելու նպատակայարմարութեան տեսակէտից։

1905 թ. հաշիւը պետական հսկիչը արդէն ներկայացրել է Դումային։

Ֆինանսական մասնաժողովը նախագահ ընտրեց կուլչէրին, քարտուղար Սալաիկօվին։

Անկուսակցականների միացեալ կուսակցութիւնը որոշեց մասնակցել ընդդիմադիր կուսակցութիւնների տեղեկատու բիւրօյին։ Իբրև ներկայացուցիչներ ընտրվեցին Միխայել Սամսօվիչ և Մալիէվ։ Խմբակը բոլոր մասնաժողովների համար մատնանշեց անդամներ և ընտրեց մի յատուկ մասնաժողով խզճի ազատութեան կառավարական օրինագիծը քննելու համար։

ՆԱՄԱԿ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ

(Մեր սակաս թղթակցից)

—

Մարտի 17-ին

Այսօր Պետական Դուման զբաղվեց «գործազուրկների» հարցով և վճռեց դրական կերպով, այն է յանձնել գործազուրկների խնդիրը առանձին կոմիսիայի, 19 պատգամաւորներից բաղկացած։

Նախ քան խնդրի քննութեան դիմելը, նախագահը յայտնեց, որ օրակարգի մասին առարկութիւններ կան։ Աջակողմեանները առաջարկեցին, որ Պետական Դուման նախ և առաջ զբաղվի հողային հարցով, որ այդ հարցը ընդհանուր և շատ կարևոր նշանակութիւն ունեցող հարց է, ուստի անհրաժեշտ է ամենից առաջ վճռել։ Ժողովրդական ազատութեան կուսակցութեան անդամները այն առարկութիւնն էին անում, որ գործազուրկների հարցի առաջարկը նրանց համար պարզ չէ, որովհետև այդ առաջարկը տպագրված չէ և հետևաբար շատ պատգամաւորներ մանրամասն ծանօթ չեն։

Ինչպէս ես անցեալ Նամակներից մէկում գրել էի, Պետական Դուման վճռել էր այսպիսի կանոն. որ ամեն մի առաջարկ չէ կարող քննութեան առարկայ լինել, նախ քան այդ առաջարկը մի կամ երկու օր առաջ տպագրված չը լինի և պատգամաւորներին չը բաժանվի։ Այդ անվում է այն նպատակով, որպէսզի պատգամաւորները հնարաւորութիւն ունենան հարցի և առաջարկութեան հետ մանրամասն ծանօթանալ և ամեն մի կուսակցութիւն կամ ֆրակցիա որոշ դիրք դնելու իր համար։ Այս օրակարգը աչքի առաջ ունէին կադէտները, որ առաջարկում էին, այսօրվայ նիստի զբաղմունքից հանել գործազուրկների հարցը։

Դրան առարկեցին Ծերեթելին և Զափարիձէն, որ գործազուրկների հարցը դրված էր դեռ ամսի 7-ի նիստին, բայց Դուման յարմար դատեց այն ժամանակ զբաղվել միմիայն հաց մատակարարելու հարցով, գործազուրկների հարցը յետաձգելով մօտակայ նիստերից մէկին և ահա այսօր Պետական Դուման պիտի զբաղվի այդ հարցով։ Իսկ ինչ վերաբերվում է նրան, որ հողային հարցը աւելի կենսական հարց է, դրան առարկում էին, որ սովը չէ կարող սպասել, որ ամեն օր անգործ քաղաքացիները գործազուրկներ սովից մեռնում են, կամ ինքնասպանութեամբ վերջ դնում իրանց կեանքին, և այլն, իսկ եթէ հողային հարցով մէկ օր ուշ կամ շուտ զբաղվեն, դրանից այնքան վնաս չը կայ, առաւել ևս, որ ձևական կողմից այդ անկարելի է, որովհետև պատգամաւորներից ոչ ոք մանրամասն ծանօթ չէ այդ առաջարկութեան հետ։ Դուման վճռեց հողային հարցի վերաբերեալ առաջարկութիւնը յետաձգել երկուշաբթի օրվայ նիստին։

Ամբիոնի վրա է Զափարիձէն։ Սօցիալ-դեմոկրատական ֆրակցիայի կողմից առաջարկում է լուրջ վերաբերվել գործազուրկների հարցին, որովհետև այստեղ վճռվում է հարիւր հազարաւոր բանւորների և նրանց ընտանիքների վիճակը։ Զափարիձէն խօսում է ցածր, խուլ ձայնով, բայց անկեղծ և ոգևորված։ Չը կայ այն արտաքին պաթոսը, որը առանձնայատուկ է շատ ճառախօսներին։ Նա երկար կանգ է առնում այն պատճառների վրա, որոնք առաջ են բերում գործազուրկները և պարզում է, որ մեծ մասամբ առանց գործի են մնում կամ գործազուրկների և կամ զանազան կառավարչական կարգադրութիւնների պատճառով։ Այն ժամանակ, երբ կառավարութիւնը սարսափելի խոչընդոտներ է հանում զանազան արհեստակցական միութիւնների առաջ գործարանատէրերը, կապիտալիստները միանգամայն ազատ են զանազան խնարիկներ կազմելու, օկտաւներ կազմակերպելու և այդպիսով ահագին քանակութեամբ բանւորներ նորից և նորից դուրս շպրտելու գործարաններից։ կառավարութիւնը ամեն տեսակի խոչընդոտներ է

գործ դնում բանտարկների վերաբերեալ, որպէսզի նրանք չը կաղմակերպվին, իսկ ընդհակառակը գործարանատէրերից, ֆաբրիկանտներից պահանջում է, որ նրանք միտամուս ոյժերով կուռն բանտարկների դէմ։ Այսպէսով առաջ է գալիս սով, տանջանք և բարբերի փչացում։

Զարմանալի ճաշը այնքան տպաւորութիւն չէ թողնում, ինչպէս անցեալ անգամ Ծերեթելիի ճաշը։ վերջումը կարդում է սոցիալ-դեմոկրատական ֆրակցիայի բանաձևը. «Մոլցներ ձեռք առնել սովեալների և գործադուրկների համար և ոլորտել այդ օգնութիւնը կաղմակերպված լինի, բոլոր տեղերում՝ սովի, մթերքների և գործադրկների վերաբերեալ, հաւաքվի ոչ թէ միայն պաշտօնական և զրաւոր տեղեկութիւններից, այլ և տեղն ու տեղը, յանձնելով այդ գործը 33 հոգուց բաղկացած մի յանձնաժողովի»։

Բոլոր ձախակողմեանները համաձայն էին զրված հարցի հետ, միայն կադէտները մտցրել էին մի քանի կարևոր փոփոխութիւններ այդ բանաձևին։ Կադէտների առաջարկը զանազանվում էր նրանով, որ նրանք առաջարկում էին օգնութիւն գործադուրկներին, «որոնք ՀԱՍՎել են արդիւնաբերական կրիզիսից». այդպիսով նրանք գործադուրկներին օգնութեան գործը սղմում են միայն յայտնի բամկանների մէջ, մինչդեռ սոցեալ-դեմոկրատների դրած հարցը աւելի լայն էր և ընդգրկում էր բոլոր գործադուրկներին։ Ինչպէս Ծերեթելին նկատեց, գործադուրկներից 17 տոկոսը պատկանում է այն կատեգորիային, որոնք զրկվել են աշխատանքից «արդիւնաբերական կրիզիսի պատճառով», 40 տոկոսը քաղաքական գործադուլների պատճառով և 20 տոկոսը այն պատճառով որ բանտերը կազմակերպված են և կամ պատկանում են այս կամ այն կուսակցութեան. սահմանափակով յանձնաժողովի գործունէութիւնը, այդպիսով մենք առաջուց խաչ ենք դնում նրանց գործունէութեան իրա։

Երկրորդ փոփոխութիւնը, որ ժողովրդական ազատութեան կուսակցութիւնը մտցրել էր, այն էր որ յանձնաժողովի վրա չը դնվի պարտաւորութիւն քննութեան ձեռնարկել տեղն ու տեղը, եթէ այդ հարկաւոր դտնվի։

Ձախակողմեանները այսօր համեմատաբար աւելի խոնջ էին. միայն սասիկ իրանց վիրաւորված զգացին, երբ Զասարիձէն նկարագրելով գործադուրկներին հասած հալածանքները, ասաց, որ ռուս մարդկանց մտքին մտահոգվածք կեղով հալածանքների և պարտութիւնների է ձեռնարկում։ Գուրիչևվիչը վեր է թռչում տեղից և բղաւում է. «Ես թոյլ չեմ տալ վիրաւորել «ռուս մարդկանց մտքեան պատիւը, այդ ասածները սուտ են»։ Զասարիձէն տարակուսում է, որ ինքը իր մտ ունի փատաթղթեր և ուզում է կարդալ, բայց նախագահը թոյլ չէ տալիս կարդալ, որովհետև «դա փաստաթուղթ չէ, ամեն մարդ կարող է պատրաստել ինչ որ ցանկանայ», բայց Զասարիձէն շարունակում է ապացուցել, որ ռուս մարդկանց մտքեանը հալածանքներ է կազմակերպում գործադուրկների և ինտելիգենտների վերաբերեալ և իբրև փաստեր առաջ է բերում Հերցենշտէյնի և Իօլլոսի սպանութեան փաստերը։ Գուրիչևվիչը նորից բղաւում է. «դեռ հաստատված չէ». ընդհանուր աղմուկ։—ձախակողմեանների և կենտրոնի ծափահարութեան և աջակողմեանների բողոքի մէջ լսվում է թափանցիկ և կարուկ ձայնը՝ «ապացուցվի, կապացուցվի»։

Վերջի վերջոյ հարցը քուէարկութեան է դրվում և սկսում են քուէարկութեանը։ Կադէտներին միացած են աջակողմեանները. նորից տեսանվում է այն պատկերը, ինչ որ մենք տեսանք մարտի 9-ի նիստում։

Հարցը քուէարկվում է. «որոնք ՀԱՍՎել են արդիւնաբերական կրիզիսից»—այս նախադասութիւնը թողնի՞լ բանաձևի մէջ, թէ դուրս ձգել։ Բոլոր ձախակողմեանները մի կողմից, կադէտները, աջակողմեանները միւս կողմից համարեա հաւասար չափով են ձայնակցում. ձախակողմեանները ստանում են 205 ձայն, իսկ միւսները 204 ձայն, նախագահի և ամբողջ պրեզիդիումի ձայներն էլ հաշված։ Եւ որովհետև մի ձայնի առաւելութեամբ անցած հարցը ցոյց է տալիս, որ դա կարող է և պատահական ընտրութիւն ունենալ, վճռվում է յանուանէ քուէարկել այդ հարցը։ Պարզվում է, որ ձախակողմեանները ստանում են 223 ձայն, իսկ կադէտներն և այլն 202 ձայն։ Հետաքրքիր է նկատել, որ Կրուչևանը ձայնակցում էր ձախակողմեանների հետ, այսինքն այն ֆորմուլային, որ օգնութիւն հասցնվի բոլոր գործադուրկներին, որոնք ՀԱՍՎել են և քաղաքական գործադուլներից և այլն։ Սրանց միացել էին 6 կադէտներ (Արսենանցիվ, Երշով, Բեդրով, Զելնոկով, Բերիզինը՝ և Ուսպենսկին), իսկ 11 պատգամաւոր ձեռնաց մը-նացին, որոնց շարքում և Գուրիչևվիչը։

Երկրորդ հարցի քուէարկութեան ժամանակ նախագահը մի փոքր դատապարտեց իր կորեկտութեան և հարցը այնպէս դրեց, որ յատուկ դրվեց երկուշաբթի օրվայ։ Սոցիալ-դեմոկրատները առաջարկելով «քննութիւն տեղն ու տեղը», չէին ձեակերպել, թէ նրանք ինչպէս են կարծում. ձախակողմեանները պիտի ուզարկի իր անդամներից տեղն ու տեղը ուսումնասիրելու հարկաւոր հարցերը. աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ ամսի 9-ի նիստին նոյնատեսակ հարցը զրված էր նոյնպէս անորոշ, նախագահը օգտվեց այդ հանգամանքից և առաջարկեց Դումային յայտնել, թէ կարելի՞ է արդեօք ընտրել յանձնաժողով, երբ այդ հանգամանքը պարզ չէ. Դուման այնուամենայնիւ վճռեց երկուշաբթի օրը ընտրել յանձնաժողովը, բայց այդ հարցը թողնել առ այժմ առկախ։

Մնում է մի քանի խօսք ասել Ֆիլոսոֆովի ճառի մասին։ Անպէտ զանազանութիւն սրա և Սոլլիպլինի մէջ։ Վերջինս խօսում է կարուկ, բայց միևնոյն ժամանակ խելք և ծրագրային, իսկ Ֆիլոսոֆովի ճառը, նրա խօսելու ձևը կոպիտ և յանդուգն է։ Նա ասաց այն, որ կառավարութիւնը համաձայն չէ, որպէս զի քննութիւններ կատարվին տեղն ու տեղը, որովհետև դա օրէնքից դուրս է։

Արսէն Բալանթար

ՄՏՔԵՐ ԵՒ ՓԱՍՏԵՐ

I

Իմ բացակայութիւնը Թիֆլիսից, արգելք եղաւ, որ ես այս տարվայ սկզբից շարունակէի հաղորդել «Մշակի» ընթերցողներին իմ մտքերը և փաստերը։

Վերադառնալով Բոհեմիայից և Գերմանիայից, ուր ես մի փոքրիկ ճանապարհորդութիւն կատարեցի, ես անշահաւէտ չեն դտնում «Մշակի» ընթերցողների համար հաղորդել իմ տպաւորութիւնները և այն ամենը, ինչ որ ես լսեցի և կարդացի ռուսաց Պետական Դումայի մասին։

Պէտք է ասեմ, որ Բոհեմիայում և մանաւանդ նրա մայրաքաղաքում, չեխերը մեծ սէր և համակրութիւն են տածում դէպի ռուսները։ Որքան մեծ և սասիկ է չեխերի ատելութիւնը դէպի գերմանացիները, այնքան մեծ և սասիկ է նրանց սէրը, համակրութիւնը դէպի ռուսները։ Այդ պատճառով էլ չեխերը մեծ հետաքրքրութեամբ սպասում էին Դումայի բացման և չեխ մամուլը անգամ տեղ էր տալիս իր էջերում ռուսական դէպքերին։ Գրեթէ բոլոր գլխաւոր և երկրորդական կաֆէներում և հիւրանոցներում դուք կը գտնէք մի կամ երկու ռուսական լրագիր. մինը՝ անպայման «Новое Время»-ն և միւսը «Рѣчь» կամ «Русь»։ Առաջին թերթը նոյն իսկ այնքան տարածված է, որ երբ սրճարանի սպասաւորին գնում ես և խնդրում՝ տալ ռուսական լրագիր, նա իսկոյն պատասխանում է. «այո, դուք կուզենում էք «Новое Время»-ն, իսկոյն կը բերեմ,—գնում բերում է այդ թերթը։ Սակայն «Рѣчь» և «Русь» լրագիրները ազող կերպով մրցում են նրա հետ, մանաւանդ Պետական Դումայի բացումից ի վեր։ Որովհետև չեխ ինտելիգենցիայի, ժողովրդի մեծագոյն մասի և մտաւոր ամբողջ բարեմտութիւնները ուղղված են առ այն, որ ռուսաց Պետական Դուման տանէ Ռուսաստանը դէպի վերածնութիւն և սահմանադրական ու արդարամտական ըէժիմը խաղաղ աշխատութեան և էվոլիւցիոնական ճանապարհով։ Եւ այդ հնարաւոր էր հնարվում միայն այն դէպքում, եթէ Դուման լինէր մեծամասնութեամբ կադետական, որովհետև կադէտների կուսակցութիւնը վայելում է անգամի ժողովրդականութիւն և համակրութիւն և դէպի կադետների գործիչները չեխերը տածում են մեծ յարգանք։ Այդ պատճառով էլ սկզբում, ընտրութիւնների ժամանակ, ամենամեծ հետաքրքրութեամբ հետևում էին, թէ կադէտները ո՞րքան ձայն են ստանում։ Երբ Դումայի կազմի իսկական պատկերը պարզվեց, երբ յայտնվեց, որ կադէտները մեծամասնութիւն չեն կազմում, դառողութիւնները Դումայի ապագայի մասին պեսսիմիստ էին։ Սակայն երբ մի քանի օրից յետոյ յայտնվեց, որ զեկավարող դերը, յանձնայն դէպս, պատկանելու է կադէտներին, մամուլը և հասարակական կարծիքը սկսեցին արտայայտել, թէ ռուսական երկրորդ Դուման երկարատև կը լինի և արդիւնաւէտ։

Մի պրոֆէսօրի, որ այն կարծիքին էր, թէ միայն կադէտային Դուման կարող է իրագործել Ռուսաստանի վերածնութիւնը և առաջադրութիւնը։

—Որովհետև միւս բոլոր կուսակցութիւնների մէջ, ինչպէս ինքներդ ես կարդում էք, չը կան այնպիսի հոգու, գիտակ, ներշնուն, ձեռնտաս, աշխատող անդամներ, ինչպէս կադէտների մէջ։ Ցոյց տուէք միւս կուսակցութիւնների մէջ Մակլակովի, Կուզլերի, Հեսսենի, Թելեգրաֆովի, Տեսլենկոյի պէս գործիչներ, ցոյց տուէք Թելեգրաֆովի պէս հոգու նախագահ-դիվանագէտ։ Վերջապէս, մի՞թէ չէք տեսնում, որ ծայրահեղ ձախակողմեան կուսակցութիւնները, մանաւանդ սոցիալ-դեմոկրատները պարզ ցոյց են տալիս, որ Դումայի մէջ իրանք նկատում են ոչ թէ օրէնսդրական մի հաստատութիւն, այլ լոկ մի միջոց՝ յեղափոխականացնելու ռուս ժողովուրդը։ Բայց Ռուսաստանին այսօր օդի և չրի պէս հարկաւոր է հաստատ օրէնք և սահմանադրական ըէժիմ, իսկ այդ ձեռք կը բերվի, երբ Դուման անսայթաքօրէն, հաստատակամ, առանց խորին ցնցումների և արագ ոստումների կընթանայ դէպի գլխաւոր նպատակը—օրէնսդրութիւնը և սահմանադրական կարգ ու կանոն ստեղծելը։

Զեխ պրոֆէսօրի այս հայեացքը արտայայտում է ամբողջ չեխ ինտելիգենցիայի մեծամասնութեան հայեացքը։

Ոչ նուազ յարգանք են տածում դէպի կադետները և Գերմանիայում, ուր սոցիալ-դեմոկրատիայի կրած վերջին պարտութիւնը մամուլը իբրև օրինակ է ցուցադրում Ռուսաստանին և ուղղակի յայտարարում, որ ռուս սոցիալ-դեմոկրատները, եթէ, արդարև, անկեղծ կերպով ցանկանում են իրանց երկրի և աշխատաւոր ժողովրդի բարօրութիւնը, պէտք է թև և թիկունք տան կադետներին և աշխատեն իրագործել ժողովրդական ազատութեան կուսակցութեան ծրագիրները։ Այդ մտքով էլ գերմանական մամուլը խորհուրդ է տալիս Սոլլիպլինին՝ համակերպվել կադետների ծրագրին և առաջարկներին, եթէ չէ կամենում Ռուսաստանը ենթարկել աւելի մեծ աղէտների։ Այս խորհուրդը տալիս է գերմանական ազատասիրա և պրոգրէսիստ մամուլը։ Մամուլի մի մասը, սակայն, չէ հաւատում Դումայի տեղողականութեան և այն հաւատն ունի, թէ երկրորդ Դուման ևս կարձակվի։

Կադետային պատգամաւորների վերջին ճառերը Դումայում աւելի ևս բարձրացրին այդ կուսակցութեան հեղինակութիւնը և վարկը Գերմանիայում և գերմանական մեծ մամուլը, օրինակ՝ «Տագբլաթ», «Ֆոսիշէ Ցայտունգ» և ուրիշները համոզված են, որ Ռուսաստանի վերածնութիւնը կարող է կատարվել գլխաւորապէս կադետների միջոցով։ Մեծ զոհաբերութեան է արժանանում կադետների շրջանակութիւնը, զգուշաւորութիւնը, հեռատեսութիւնը և նրանց գործ դրած բոլոր միջոցները, որ կառավարութեան ձեռքը չը տրվի զէնք՝ լուծելու Դուման, որ հէնց իր գոյութեան փաստով պէտք է տապալէ հին ըէժիմը և նրա աւերակների վրա կանգնեցնէ վերանորոգված Ռուսաստանի շէնքը։

Շանրիար

ՄԱՄՈՒԼ

—

Գ. Բ. Իօլլոսի սպանութիւնը շարունակում է զրգռվել հասարակական կարծիքը. մամուլը սկսում է հանեմատութիւններ դնել և շաղկապել այդ սպանութիւնը հանգուցեալ Հերցենշտէյնի սպանութեան հետ։ «Բիշ» լրագիրը այդ առիթով գրած մի ջերմ յօդուածում ասում է, որ հանգուցեալին սպանել են անկասկած վարձկան մարդասպանները։

Որովհետև այդ բարի, մեղմ և սիրալիր մարդը ոչ մի անձնական թշնամիներ չունէր։ Ամբողջապէս յայտնակված իր լրագրական գործով, որը նա չափազանց սիրում էր և որին նուիրված էր նա, առանց խնայելու իր ընտանեկան վշռով քայքայված առողջութիւնը, ոչ միայն իր բոլոր ոյժերով, այլ և իր բոլոր մտածմունքներով։ Գ. Բ. ջերմ հաստակամը էր վայելում իր բոլոր ծանօթների կողմից, և հանդուցեալի մասին երկու կարծիք չը կար։

Ապա, լրագիրը համեմատելով այդ սպանութիւնը Հերցենշտէյնի սպանութեան հետ, առելացնում է.

Հերցենշտէյնի սպանութիւնը, ինչպէս յայտնի է, յայտարարվել էր Մոսկվայում կատարված գէպքից մի քանի ժամ առաջ։ Այս անգամ «թիւրիմացութիւնը» կրկնապատկվել էր նրանով, որ սպանութեան նախորդ օրը Պետերբուրգում լուր էին տարել, որը տարածվեց կայծակի արագութեամբ, Ֆ. Ի. Բոգդէչևվի սպանութեան մասին։ Բարեբաղդաբար Բոգդէչևվը անփորձ էր, սակայն օդում դարձեալ տաք արիւնոտ էր գալիս, և նա, արդարև, թափեց...

Եվ թէպէտ կարելի է ասելացնել դրա վրա։ Մի՞թէ ասված չէին այն բոլոր խօսքերը, ինչ որ հարկաւոր է ասել։ Մի՞թէ ճշմարտութիւնը չէ՞ մերկացել ամբողջ արմատով և իր այլանդակ մերկութեամբ աչքի չէ՞ ընկնում։

*

Հերցենշտէյնի սպանութիւնը և նրա գատաստանական ամբողջ գործավարութիւնը, որի վրա այժմ էլ ուշանում է Գ. Բ. Իօլլոսի սպանութիւնը «ռուս ժողովրդի միութեան» մարմինների ձեռքով, առիթ է տալիս «Новь» լրագրին հետևեալ հարցը տալու.

Ինչպէս է, վերջապէս, որոշում իր վերաբերմունքը այդ հանցավորական կազմակերպութիւններին ինքը կառավարութիւնը։ Չէ կարող նա այսուհետև էլ անտես ձևանալ, չը տեսել այն բոլորը, ինչ որ պարզապէս տեսնում է այժմ ամբողջ Ռուսաստանը։ Ռուս ժողովրդի միութիւնը բացարձակ կերպով պատասխանում է պետական կարգերը յեղաշրջել, նա բանից երևում է, որ ինչ որ անհասկանալի սերտ յարաբերութիւններ ունի մարդասպանների ու բանդիտների հետ, նա մի կողմից ուզում է լինել պետութեան պետութեան մէջ, իսկ միւս կողմից՝ նրա հետ կողք-կողքի կանգնած են ինչ որ «ժողովրդական կամաւորական» ազատական խմբերը։ Եւ մինիարների խորհրդի պ. Նախագահը միութեան հետ փոխանակում է սիրալիր հեռագիրներ, շնորհակալութիւն է յայտնում նրա բարեմտութիւնների և առանձին անդամներին արտայայտած բարեմաղթութիւնների համար։

Բանի դեռ լուսաբանված չէ Հերցենշտէյնի և Իօլլոսի սպանութեան կազմակերպված գործը, քանի դեռ պարզված չէ ով է ուղարկեալ ասելու այդ Նարոդաբ և յանցաւոր պրոպագանդայնին,—մինչ այդ կառավարութեան վրայից չէ կարող վերանալ նրա վրա ընկնող ծանր և անպատուաբեր մեղադրանքը։

Մենք անհամբերութեամբ սպասում ենք, որպէսզի կառավարութիւնը յանուն այն պետական իշխանութեան արժանապատուութեան, որը պահպանել նա պարտաւոր է և որի ժամու այնքան յաճախակի յիշեցնում է «Россія»-ն, երբ հարկաւոր է լինում պաշտպանել բիւրօկրատական պատասխանատուութեան հարցը, պարզ և որոշ կերպով կանչէ իրան սև հարիւրեակի թէօրետիկներից ու փորձնականներից։ Դա արդէն, ի հարկէ, միայն մի կուսակցութեան հարց չէ, և այդ պահանջին պէտք է միանան բոլոր քաղաքական կուսակցութիւնները, որոնց համար Ռուսաստանի արժանապատուութիւնն ու պատիւը շատ թանգ է։ Երկրների քաղաքականութեան շարունակումը, որի արձագանքը լսվում է Պետական Դումայում, Գուրիչևվիչի բերանից, ինքն իրա ինքեան ստուեր է դցում մինիարութեան վրա։

Թէ Սոլլիպլինի լիազորութիւնը իսկապէս վերջանում է այնտեղ, որտեղ սկսվում է ռուս ժողովրդի միութեան հզօրութիւնը։ Թէ ռուսաց պետական իշխանութիւնը արդէն անձնատուր է եղել նրա առաջ։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱԻԱՌԻՑ

—

Դալաչա, մարտի 16-ին

Այսօր 14-ին, երեկոյեան ժամը 9-ին, պատեղ եկան Կութի գիւղից Թիֆլիսի կենտր. Նպ. Յանձնաժողովից ուղարկված պ. Տէր-Պողոսեանցն և Զաքարիա քահ. Ապրէսեան. 15 ի առաւօտեան մեծ հմտութեամբ կազմվեց իսկական ազքատների ցուցակը և ապա բաժանեցին 250 ր.։ Սովածների ուրախութեանն սահման չը կար, նրանց Զատիկն էր և ինչպէս գիւղացիք են ասում՝ «կանթեղի մէջ ձէթ ածին»։

Խորին շնորհակալութիւն ազքատների կողմից։

—

—Մարտի 15-ի երեկոյեան սկսեց անձրև գալ, առաւօտեան, 16-ին, կրկին մաղում էր անձրևը. 6—7 ժամին սկսեցին ամպերը տրաքտրաքել, որի ժամանակ, երկու կողմերը՝ երկու պռաչափ—կիսված՝ երկնքից վայր ընկան՝ մէկը կողք գիւղի միւսը՝ այգիների մէջ, գիւղից ցածր։ Դիւղերում զանազան ենթադրութիւններ են անում, աշխարհի վերջն են գուշակում. գիւղերում քանանեներից մի քանիսը «ճեփրէմ վերդին» կարդում են գլուխներն պտտացնելով, որ իբր թէ Աստուած պատիժ է ցոյց տալիս անհաւատներին։

Մելքիսեդէկ քահանայ

ԹԻՖԼԻՍԻ ԴՈՐՈՅԱԿԱՏԱՐՆԵՐԻ ԺՈՂՈՎՈՒՄ

I

Մարտի 22-ին, երեկոյեան ժամի 7-ին, նշանակված էր Թիֆլիսի գործակատարների ժողովը 6 ներկայացուցիչ ընտրելու համար, որոնք վաճառականների կողմից ընտրված 6 ներկայացուցիչների հետ միասին պէտք է ժամանակին այն մասնաժողովին, որը պէտք է մշակէ կանոններ նորմալ հանգստութեան համար։

Դեռ 6 և ½ ժամից գործակատարների առանձին բաղմութիւն խնված էր քաղաքային դումայի շինութեան առջև թէ Երևանեան հրապարակի և թէ Վէլեամինսկայա փողոցի կողմից։

Հաւաքված բազմութեան մէջ կային հայ, վրացի, հրէա, ռուս և մի քիչ թուով էլ թուրք գործակատարներ։ Արտաքուստ այդ բազմութիւնը մի տարօրինակ քաոս էր ներկայացնում. վերջին տարաղող զուգված ու ուռնդէվուի պատրաստ երիտասարդներ, քէչա փափախաներ, չուխայատոր և տրեխատոր հագած պատանիներ, որոնց մարդ չը կիսի գործակատարի տեղ ընդունել, թէ՝ ինչպէս գիւղացու. աչքի են ընկնում մի քանի մէջերն տարիքով գործակատարներ, որոնք իրանց արտաքինով, թերևս և ներքինով ու աշխարհահայեացքներով, չեն տարբերվում տիպիք բուրժուաներից։ Եւ այդպիսիները ըստ ամենայնի թելադրութեամբ զբաղ էին կարծես, որ իրանք դիտաւոր են կազմում պատանիների շրջանում և իրանց հասարակակիցների հետ միասին պատի տակ քաշված՝ զրուցում էին օրակարգի հարցի մասին։ Գիրակչող տարրը այդ բազմութեան մէջ 17—35 տարեկան գործակատարներն էին, բայց սակաւաթիւ չէին և 17 տարեկանից պակաս գործակատարները։ Մեծ հետաքրքրութիւն էր նկատվում նրանց մէջ. զանազան խմբերի բաժանված զրուցում էին ոմանք պատմում էին, որ սոց.-դեմոկրատները արդէն նախորդել են 3 վրացու, մի հայի, մի հրէայի և մի ռուսի անցկացնել և ամբոխը ալիքի նման ծփում էր մի խոնջ դէպի միւս խումբը անցնելով, սի գունից միւս դրան մօտենալով անհամբեր սպասելով դրան բացվելուն. նշանակված ժամանակը արդէն վաղուց անցել է, բայց գունները չեն բացվում և ոմանք կանգնելուց յոգնած՝ կամաց-կամաց իրանց տներն են քաշվում։

Վերջապէս ժամի 7 ½-ին մուտքի դուռը բացվում է և այդ անագին բազմութիւնը հեղեղի թափով իրար առաջ հրելով ու ճնշելով բարձրանում է յանդուգնորով և խնվում դահլիճի դրան առաջ. ոչ մի կարգադրութիւն չէ նշմարվում, իսկապէս գիտակցութիւնն ու ամբոխային հակումները, ընբռնումները միաձուլված իրար հետ մի գեղեցիկ են կազմում։

Ոմանք ներկայանում են թերթիկներով, բայց շատերը սուտ գրելու հնարաւորութիւն չեն տալիս և ներս են թափվում ուժով։ Թէ դահլիճը և թէ պատշգամբը լի են ընտրողներով։ Աջակիրներն էլ են գործակատար, 16 տարեկան մանուկներն էլ, ուսուցիչներն էլ, ժուրնալիստներն էլ։

II

Ուղիղ ժամի 8-ին քաղաքագլուխը ներս է մտնում։

Ժողովականներին կարգի հրաւիրելով, նա յայտնում է գործակատարների ժողովի նպատակը, առաջարկելով 6 ներկայացուցիչներ ընտրել իրանց միջից։ Նա ի միջի այլոց անդրադարձնում է, որ վաճառականների ընտրութիւնը տեղի չէ ունեցել, որովհետև շատ քիչ մարդ է եղել հաւաքված, այդ պատճառով էլ նրանց ընտրութիւնը յետաձգված է։

Ի նկատի առնելով այն հանգամանքը, որ անհարիր եղաւ ներկայ եղող գործակատարներից շատերի ընտրողական իրաւունքները սուտ գրելու միջոցով ժամանակ, որ ընտրութիւնների մասնակցելու եկած գործակատարների մէջ 16 տարեկան մանուկներ շատ կան և անհարիր էլ է կատարել ընտրութիւնը, առաջարկից յետաձգել։

Ժողովը որոշեց ընտրութիւնը յետաձգել առաջիկայ կիրակի օր, ցերեկը, ամարային ժողովարանում։

Ընտրութիւնը փոքր ի շատէ կանոնաւոր դարձնելու համար, որոշեց պահանջել, որպէսզի իւրաքանչիւր հաստատութեան ներկայացուցիչը ունենայ վկայագրով իր հաստատութիւնից, իսկ ներկայացուցիչ ուղարկել կարող են այն հաստատութիւնները, որոնք արդիւնաբերութեան վկայական ունեն (промысловое свидѣтельство)։

Ժողովականները ցանկութիւն յայտնեցին ժողովը համարել խորհրդակցական և շարունակել։

III

Սակայն բաւական չէ ցանկանալ նիստը շարունակելու, հարկաւոր է և իմանալ թէ ինչու և ինչպէս շարունակել։ Եւ անա, երբ ցանկութիւնից անմիջապէս յետոյ պէտք է գործի անցնել, պէտք է նիստը կառավարելու համար նախագահ ընտրել, երևան են գալիս այդ խառնիճաղանջ բազմութեան մտաւոր և հոգեկան ծայրահեղ տարբերութիւնները։ Ազմուկ, զանգատարութիւն, դժգոհութիւն, խառնվում են իրար, մէկը միւսին չէ լսում, գիտակցութեան, այն էլ դասակարգային գիտակցութեան, համոզիչ օրինակներ չեն նշմարվում։ Ինչու էին այդքան ազմկում սի Գալատեանցի կամ մի Մարօցկիի համար. միևնոյնը չէր, մի՞թէ, թէ ով նախագահ կը լինի։ Ինչ գործ ունէին 16 տարեկան պատանիները ընտրող գործակատարի դերում, այն էլ թերթիկներով։ Ո՞ր զեկավարող սկզբունքն էր նրանց այդտեղ բերել, մի՞թէ գաղափարական յաղթանակի փափագը, այլ ոչ թաքֆայական, և յաղթող հաչակվելու սին փառքը։ Ինչ որ հակառակորդ, ախոյան ոյժեր, կուսակցական նեղ ձգտումների զրդումից գաղտագողի կերպով մօտենում են իրար զարնվելու համար, մէկը կուսակցական պրոֆիսիոնալ գործակատարների միութիւնը, իսկ միւսը՝ անկուսակցական դիմակով։ Բայց մի՞թէ գործակատարների շրջանում չը կան ինքնուրոյն կերպով մտածող և աւելի լայն գաղափարներով տոգորված ոյժեր, որոնք կարող լինէին կազմակերպել անկուսակցական, բառի բուն իմաստով, գործակատարների միութիւն, առանց որևէ առնչութիւն ունենալու այս կամ այն կուսակցութեան հետ։ Դասակարգային գիտակցութիւնը դրանով ոչ միայն չէր թուլանայ, այլ և աւելի պատկառելի կը դառնայ։

Ցանկալի էր, որ գործակատարների միութիւնը օրինակ վերցներ Մոսկվայի և Պետերբուրգի իր ընկերներից։ Դասակարգային գիտակցութիւն ոչ միայն չէր նկատվում այդ ժողովում, այլ և այն ժամանակ, երբ քաղաքագլուխը նախագահութեան համար թեկնածու էր ուզում ընտրել, ժողովը խառնիճաղանճ ամբոխի պարզ ապացոյցներ տուեց. թեկնածու Մարօցկիի ձայնը գերակշռող դարձնելու համար, ոմանք, երկու ձեռքերն էին վեր բարձրացնում։ Այնպէս որ քաղաքական այդ լիարանցման մէջ քաղաքագլուխը ստիպված եղաւ ժողովը փակված յայտարարել և առաջարկից հեռանալ։

Աշխատակից

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

(Պասխալովայի և Արախտական թատրոնի ներկայացումները)

I

Պասխալովայի խումբը, մարտի 21-ին, ներկայացրեց «Բարի Ատաղ» դրամայի, չորս գործողութեամբ։

Դրամայի գաղափարը շատ հին է։ Ուստի նա ներքին առանձին հետաքրքրութիւն չէ ներկայացնում։ Բայց գրված է կենդանի, փայլուն և խտացրած գոյներով։

Թատրոնական աշխարհի ասող դերասանուհի Լօնա Լատինզէր զոհացում չէ զգում փաստից, հարատեւութիւնից, հասարակութեան համակրութիւնից և իր տրած բնից և որոնում է անկեղծ, հասարակ, մաքուր սէր։ Նա հանդիպում է պօստասան մէջ ծառայող անտաղանդ դրամատուրգ մի պաշտօնեայի և գրաւելով նրան իր փայլով, գեղեցկութեամբ և նպատակութեամբ, ինքը սիրահարվում է նրա վրա, բայց երկար ժամանակ չէ զուարճանում իր սիրոյ խրիլլիայից։ Դերասանուհու այդ սէրը դառնում է յայտնի հասարակութեան և այդ գաղտնիքը կեղտոտ մեկնութիւններով ընկնում է բերանից բերան։ Լօնան ցանկանալով վերջ տալ այդ գործին, յայտնում է, որ պաշտօնեան իր փեսացուն է։ Սակայն վերջինս զզուելով այն կեղտոտ շրջավայրից, որի մէջ ապրում ու գործում է «Աստղը», ծանր ու անախորժ բացատրութիւններից յետոյ, երբ նա նոյն իսկ ձեռք է բարձրացնում նրա վրա, վճռում է հեռանալ առ միշտ Լօնայից։ Սակայն վերջինի մէջ արթնանում է դերասանուհին և նա յայտնում է, որ նա մեղաւոր չէ, եթէ բեմի շուրջը դեռ կեղտոտ է միջավայրը. նա ընդդիմում է, որ որքան էլ նա սիրէր փեսացուին, բայց նա երբէք թոյլ չի տայ անարգելու կին մարդուն, որի գործը նոյնպէս յարգելի է, ինչպէս և բոլոր միւս կանանց։ Լօնան հեռում է դերասանուհի։

Պասխալովան հաղուագիտ հմտութեամբ պատկերացրեց Լօնային։ Շատ, կսկիծի և տանջանքների արտայայտութեան մէջ Պասխալովան իսկական մի գեղարուեստապէտ է, ճանաչված այդպիսին և ուրիշ պիեսներից։ Այս անգամ հանդէս բերեց նա և մի նոր գիծ։ Զարմանքի, կամակոր և նազան Լօնային նա հանդիսացրեց տարանդաւոր կերպով։

Լօնայի հոգու բոլոր ելևէջները, որոնք վերջացան բաժանումով սիրած երիտասարդից, արտայայտվեցին զարմանալի բնական և գեղեցիկ կերպով։

Թատրօնական բժշկի դերում շատ լաւ էր դերասան Մալիկով։ Լաւ էին տիկիններ Բախմանովա և Բուրնիլցկիյ։

Ի.

II

Արախտական թատրօնում ներկայացումներ տուող ռուս դրամատիկական խումբը ունի իր մէջ լաւ դերասանական ոյժեր։ Մենք խօսել ենք տիկիններ Իբրիեվայի, Մենշիկովայի, պ. պ. Բիլիմէնտալ-Տամարինի, Նելիդովի, Տինսկու խաղերի մասին։ Յետագայ ներկայացումները ցոյց տուին, որ դրանք շատ բարեխիղճ դերասաններ են, իսկ մի քանիսը շնորհալու «Սիմֆոնիա», «Բալերինա» և «Մենեսարտի կինը» պիեսները բաւական նիթ էին տալիս եղբայացութիւններ անելու համար։

Իբրիեվան գիտէ իւրացնել տիպի ամբողջութիւնը և ուժեղ գծերով երևան հանել տիպի արտայայտութիւնը։ Ապա և համարձակ շարժումներ, խիստ խաղ և արտայայտիչ—արտասանութիւն՝ սա Իբրիեվայի արժանաւորութիւններն։

Մենշիկովան փորձված դերասանուհի է, բեմին լաւ ծանօթ, բնական խաղով, հագնվում է համապատասխան։

Բիլիմէնտալ-Տամարին խաղում է միշտ տպաւորիչ կերպով, իմաստալից, աշող կերպով ամբողջացնելով տիպերը։

Նելիդովի և Տինսկու դերերի մէջ կան ուսումնասիրութիւն, կենսական հարազատութիւն և լաւ տեխնիկա։

Պիեսները խաղացվում են աշխուժով

Տ. Կ.

III

Հինգշաբթի, մարտի 22-ին, խումբը ներկայացրեց Մարսել Պրեվօյի յայտնի «Կիսակոյսերը» բամանից փոխադրած կոմեդիան, 3 գործողութեամբ, որ անգամի բաղմութիւն էր գրաւել Թատրոն։ Գլխաւոր դերը «Կիսակոյսերի» ներկայացուցչուհի օրիորդ Մօրի դերը կատարեց դերասանուհի Իբրիեվան մեծ աջողութեամբ։ Պիէսը մերկացնում է հասարակական խոցերից մինը, երբ ինքը հասարակութիւնն է ստում աղջիկներին դէպի բարոյական անկումն իր վարմունքով։ Դուառան մաքուր, ողջախոհ երիտասարդ Մակսիմի դերը կատարեց նոյնպէս գեղեցիկ Իբրիեվան։

IV

Ախալցխա, մարտի 18-ին

Ախալցխան էլ իր հերթին տուեց մի ներկայացում յօգուտ դերասան Պետրոսեանի ընտանիքի։ Մարտի 17-ին դերասան Ն. Յովհաննիսեանը և քաղաքի սիրողների խումբը այդ նպատակով խաղացին Մանուէլեանի «Նկարիչ Թաշճեան»-ը։

Պ. Յովհաննիսեանը իր շնորհալի և գեղարուեստական խաղով վաղուց է մեզ մեծ բաւականութիւն պատճառում։ Տեղական սիրողների խմբի հետ միացած՝ նա խաղացել է «Տարտիֆ», «Քին», «Ոճրագործի ընտանիքը», «Հղեփոխութիւն» և ուրիշներ. ամեն անգամ էլ հասարակութիւնը մեծ բաւականութեամբ է մեկնել, շնորհակալ լինելով թէ դերասանից և թէ սիրողներից։

Այս անգամվայ ներկայացումը ամեն կերպ աշխատել էին լաւ և շքեղ անել. մանաւանդ որ միաժամանակ պիտի տօնվէր և Պետրոսեանի 25-ամեակը, մի առանձին բաժին-հանդէսով։ Ներկայացումը անցաւ շատ յաջողութեամբ։ Ինչպէս ամեն անգամ, այս անգամ էլ պ. Յովհաննիսեանը արտասուք երևացրեց հասարակութեան աչքերում. տարանդաւոր, բայց կեանքի անոպատ հանգամանքների տակ ճնշված Թաշճեանը ստիպված է լինում սրտի ցաւով թողնել վրձինը. իսկ երբ տարիներ յետոյ նա տեսնում է իր նոր հոգով տարված աշակերտի աջողութիւնը նկարչութեան ասպարէզում, նորից տարանքը խօսում է նրա հոգու հետ և նա վճռում է թողնել պաշտօնը և նուիրվել իր զեղարուեստին... սակայն, ափսոս, գործը նրա մէջ զարթնում է միայն կեանքի վերջալոյսի հոգերին, և նա, արդէն մեռնելու մօտիկ, չի կարողանում տանել հոգեկան յուզմունքներ

Մինչդեռ յատկապէս իրերի այս քաօսական շփոթը պէտք է հնչէ իր ողջ և հաստատուն տոնով ի կարգ հրաւիրելու և ճշմարտութեան ուղին ցոյց տալու մոլորվածներին և տարբերուածված հասարակական կեանքին իր յատուկ կերպարանքը տալու։

Սակայն հայի հասարակական շփոթը լը-ռել է։

Վանդված է հայ հասարակութիւնը. սլաքը ուղղված է նրա ամենակենսունակ և ամենաէական մասին։ Հասարակութիւնը ծառ է, նրա արմատը, գոլորոց. թունաւորված են հայկական ծառի կենսաստեղծ արժանները. ապագան անխուսափելիօրէն ցոյց կը տայ այն սոսկալի բպերն ու չարիքները, որ այսօր նիւթում ենք ապագայ հայ հասարակութեանը։

Ի՞նչն անուն մեր առաջնորդ հրապարակախօսները։

Հրապարակախօսներն անտարակոյս հասարակութեան ներկայացուցիչներն են իրապէս. նրանք հասարակական կարծիքի արտայայտիչն են, նրանք հասարակութեան պատգամբերն ու պատգամատարն են։ Ցուցնենք հասարակական կարծիք, պէտք է ստեղծագործեն խմբագիրները և դեկավարեն յատկապէս մեզ պէս յետամնաց ժողովրդի հասարակական արժանդրութիւնները և զունաւորեն նրա կարծիքները, յուշեն նրա ոգին՝ միշտ նախաձեռնող, միշտ մարանցող հանդիսանալով յանուն ճշմարտութեան։

Շարժվեցէք, հայկական պետիցիա ծնող հրապարակախօսներ. ազատութեան կարմիր դիւաւորը դեռ շատ հեռու է մթագնած Ռուսաստանից. յանցանք է նրան սպասել. պետական օրէնքը մեզ է արուել հայի ամբողջ կուլտուրան. ազատէց եկեք անպատ հանդով և վանդից ազատեցէք մեր նոր օրինականացած կուլտուրան։ Ո՞նր են ասում մեզ մոլորեալների ստեղծած դառնաղուն քամիները։

Ճիշտ է, դուք արել էք մի գործնական քայլ, հետևապէս կը նշանակէ արել էք ամեն ինչ։ Սկսել նշանակում է աւարտել. ով կամքի անդրդուելի ոյժ և գաղափարի պաշտամունք ունի, նա չէ կարող ճանապարհին մընալ. միայն մահը կը բաժանէ նրան գործունէութեան վախճանից։

Սակայն դժբաղդաբար կանգ են առել մեր հրապարակախօսները։ Ո՞ւմ էք սպասում, ինչի՞ էք սպասում։ Մոռացել էք, որ մեր լոյսի տաճարների մայր անդաստանում կատարված անլուր արարքներն ձեզ բոլորիդ ոսքի էին կանգնեցրել ճշմարտութեան բուռն բողոքով։ Մանկավարժական խորհուրդը ձեզ էլ է կամենում վարձատրի եռև տանել։ Ո՛չ, դուք արդարատութեան սեղանի շուրջը պէտք է բոլորվք և ձեր հեղինակաւոր ձայնով մեծամասնութեան համար անդնդում ապրող ճշմարտութիւնը լոյս աշխարհ հանէք։ Հրապարակախօս պարոններ, մանկավարժական խորհուրդը իր ցարդ պահպանած լուսեթեամբ ժխտում է ձեր գոյութիւնը և հասարակական վեհ կոչումն ու դերը։ Լոյսի մայր տաճարի սեւացած և կոտրված գրօշակը ձեր արդարատատ և ճշմարտապէս բազուկին է սպասում։

Շարժեցէք շեփորները... գարկեցէք լարերին .. և ցարդ տառապած և ազատութեան ծարաւի հասարակութիւնը իր մեծ մշակներին պատգամեցեք կառաջ ազատութեան պաշտամունքը տօնող անկիւններից։ Եւ դուք այն ժամանակ կը ժողովվէք իրար շուրջը և ձեր միացեալ հուժկու ձայնը կորոտայ արդէն էշ-ծածնի և ճեմարանի սև փաստաբերների վրա։ Եւ այն ժամանակ փաստաբերի տակից գեռունների նման կամայ ակամայ երես դուրս կը գան աւերի քաջարի հեղինակները։

Նախկին ճեմարանաւարտ՝

Եղիշէ Տ. Պողոսեան

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

Նիստը բացվում է առաւօտեան ժամը 11 և 14 րոպէին Գօլովինի նախագահութեամբ։ Միենիստրների օթեակում նստած է Կոկովցեվը։ Զեկուցվում է կառավարական նոր օրինագծերի մասին։ Հերթին գրած է եւիսու

այնտեղ խիստ սահմանափակված և համարեա թէ բոլոր քաղաքական իրաւունքներից զրկված է և ինքը տառապող ժողովուրդը։

Այս պարադոքսը լաւ հասկանալու համար, անհրաժեշտ է իմանալ, որ Ռումանիան, ճիշտ Ռուսաստանի նման, երկրագործական երկիր է, որտեղ բնակչութեան 80%-ը գիւղացիներ են, բայց այնպիսի գիւղացիներ, որոնցից անագին մեծամասնութիւնը, նոյնպէս Ռուսաստանի գիւղացիների նման, կամ բոլորովին հողազուրկ է և կամ տառապում է սակաւահողութիւնից։ Իսկ հողը, կարելի է ասել Ռումանիայի ամբողջ մշակվող հողը, մասամբ պետական է, իսկ մեծ մասամբ էլ մի բուռն խոշոր կալուածատէրերի սեփականութիւնն են կազմում։

Ահա, հենց այս մի բուռն խոշոր կալուածատէրերն են, որ պետութեան քաղաքական բոլոր իրաւունքները թաքաւորի հետ բաժանել են իրանց մէջ և կազմել ու մշակել են արդի ռումանական սահմանադրութիւնը, որի հիման վրա ամէն ինչ, ամէն տեսակ քաղաքական իրաւունքներ ու տնտեսական արտօնութիւններ, վերապահել են իրանց, մնացած ժողովրդին և մանաւանդ ստոր դասակարգերին թողնելով կամ ոչինչ և կամ թէ սիմբոլական փշրանքներ։

Թէ որպիսի խեղճութեան ու թշուառութեան մէջ է տառապում Ռումանիայի իրաւազուրկ և հողազուրկ գիւղական ժողովուրդը, այդ կարելի է հասկանալ նրանից, որ այդ ժողովուրդը ամբողջ տարին տասերկու ամիս կերակրվում է միմիայն եգիպտացորենից պատրաստած խաշով և ոչխարի ամենավատ տեսակի պանիրով։ Տօն օրերին դրանց վրա աւելանում է և մի քիչ բանջարեղէն։ Ռումանական գիւղային համարեա թէ երբէք միս չէ ուտում, ասում է պ. Թօթոմեանը իր մի յօդուածում, որից և մենք քաղում ենք այս վերջին տեղեկութիւնները։

Թրքու դրած կաղամբը, լոբին և ոսպը նրանց համար շքեղութիւն է համարվում։ Սնունդի այդպիսի խիստ սակաւութեան պատճառով, ռումանական ժողովուրդը անագին քանակութեամբ օղի է խմում, անշուշտ կամենալով, ալկոհոլով սնունդի պակաս լրացնել։ Թէ օղու չափազանց գործածութեան և թէ շարունակաբար եգիպտացորեն ուտելու պատճառով, ժողովրդի մէջ շատ զանազան հիւանդութիւններ են տարածված, որոնցից ամենամեծ տեղն է բռնում և ամենասոսկալին սիֆիլիսն է։

Ռումանիայի գիւղական բնակարանները չափազանց կեղտոտ են, խոնաւ, առանց լոյսի և առանց օդի։ Նրանք աւելի քարայրների ու որջերի են նմանում, քան մարդկային բնակարանների։

«Այս բոլորի հետևանքը այն է լինում,—ասում է պ. Թօթոմեանը,—որ Ռումանիայի գիւղական ժողովուրդը շատ քիչ է ապրում։

«Ագրարային հարցը Ռումանիայում միակ հետազօտող պրոֆեսոր Կ. Գրիգորեսքը ասում է, որ այնտեղ գիւղացիների մէջ շատ քիչ է պատահում 40—50 տարեկան հասակից աւելի ապրած մարդ տեսնել։ Այդ ցեղը ակնյայտնի կերպով այլասերվում է և անընդունակ է դառնում ծանր դաշտային աշխատանքներ կատարելու։ Բնակչութեան ամենամեծ մասը Ռումանիան մինչև իսկ Ֆրանսիայից էլ սաստ է կանգնած»։

«Ռեթասուսական թւականների վերջերում, —ասում է նոյն պրոֆեսորը, — ռումանական ժողովրդի միմիայն 6%-ը կարդալ ու գրել գիտէր»։

Բոլորովին զարմանալի չէ ուրեմն, որ այդ կիսաքաղցած, կիսամերկ, տգէտ, խաւար, հիւանդոտ և իրաւազուրկ ժողովուրդը պարբերաբար խրտում է, կլուխ բարձրացնում ու իրան մշտնջենապէս շահագործող, վերջին արիւն քրտինքը քամող խոշոր կալուածատէրերի ապարանքների ու գիւղերի վրա է յարձակվում, ջարդում, փշրում, կողոպտում, այրում է։ Բոլորովին զարմանալի չէ նոյնպէս, որ այդ խաւար, չը կազմակերպված ամբոխը, յաճախ իր ազատութեանը զոհ գնալով, կոյր զորձիք է դառնում հէնց այն կալուածատէրերի ու սրանց պնակալէզ ագենտների ձեռքին, որոնց անխիղճ շահագործութիւնն է հէնց այդ թշուառ ժողովրդին զազանութեան աստիճանին հասցրել, բայց և որոնք, իրանց սեփական կաշին ժողովրդային բարկութիւնից ու արդար դատաստանից ազատելու համար, ամենայն ճարպիկութեամբ, զանազան ռումանական կրուշեվանների միջոցով, կարողանում են իրանց գլխին գալիք պատուհասն ու ամբոխային զայրոյթը դժբաղդ հրէաների դէմ ուղղել։

Մոռացանք ասելու, որ Ռումանիայում մի քանի միլիոն հրէաներ էլ են ապրում։ Իրանց հարազատ ժողովրդին ամեն տեսակ քաղաքական իրաւունքներից զրկող ազա-կալուածատէրերը, իրանց մշակած սահմանադրական օրէնքներով հրէաներին ոչ միայն քաղաքական իրաւունքներից են զրկել, այլև նրանց բոլորովին բացառիկ դրութեան մէջ են դրել։ Հրէաները սահմանադրական օրէնքներով Ռումանիայում նկատվում են իբրև օտարազգի տարներ, բայց այնպիսի օտարազգիներ, որոնք պարտաւոր են իսկակ ն ռումանահպատակներից շատ աւելի մեծ չափով իրանց վրա ստանձնել ամեն տեսակ պետական պարտականութիւններ, ինչպէս օրինակ հարկեր ու տուրքեր վճարել, զինուորական ծառայութիւն անել, և այլն, բայց և որոնք միանգամայն զուրկ են քաղաքական որևէ իրաւունքից։

Այդ իսկ պատճառով էլ Ռումանիայում շատ աւելի հեշտ է լինում զրգռվածի ամբոխին «օրէնքից ու պետական պաշտպանութիւնից դուրս» համարված հրէաների վրա յարձակվելը, քան այդ կարելի է, դուցէ, Ռուսաստանում։ Եւ ռումանական կրուշեվաններն ու ու Գուրիշկեվիչները շատ փառաւոր կերպով են օգտվում այդ իրանց համար չափազանց նպաստաւոր հանգամանքից։ Ամեն անգամ, երբ ժողովրդային կուտակված բարկութիւնը սկսում է հրաբուխի պէս ժայթքել իրանց շահագործողների ու կեղեքիչների գլխին, կալուածատէրերի այդ պնակալէզ ագենտները իսկոյն խաւար ու տգէտ ամբոխի առաջն են ընկնում և բարձրացած բոռնցքները առանց այն էլ միշտ ծեծված հրէաների գլխին ուղղում։ Այդ պատճառով էլ վերջին հաշով միշտ դուրս է գալիս, որ ռումանական տանջված ժողովուրդը իր բաղդակից ու թշուառ հրէաներին է ջարդում։

Սակայն, այս վերջին «հրէական ջարդերի» ժամանակ շատ աւելի պարզ ու որոշ կերպով արտայայտվեց ռումանական ժողովրդային շարժումների իսկական բնոյթն ու ատաստը։ Դրանք պարզապէս ագրարային շարժումներ էին, ուղղված խոշոր կալուածատէրերի դէմ։ Այդ խոստովանեց և ինքը, ռումանական կառավարութիւնը։ Այդ շարժումների պատճառով մինիստրութիւնը ընկաւ և նորը կազմվեց։ Բայց թէպէտ կարող է անել այս կամ այն մինիստրական կազմը, թէկուզ նա նոյնիսկ արմատականներից լինի կազմված, քանի որ ժողովուրդը իրաւազուրկ, հողազուրկ և քաղցած կը մնայ։

80-ական թւականների վերջերում պայթած ագրարային շարժումների ժամանակ էլ Ռումանիայի մինիստրութիւնը ընկաւ և հիմիկվան պէս արմատական մինիստրութիւնը անցաւ նրա տեղը։ Ճիշտ այդ ժամանակ պարլամենտում ագրարային ռեֆորմների հարց էր բարձրացել, որպէս զի այդպիսով յեսապացում այդ կարգի շարժումների առաջն առնված լինէն։ Այն ժամանակ պարլամենտի սոցիալիստական ֆրակցիան առաջարկել էր՝ պետական հողերը համայնքներին ու կօօպերացիաներին յանձնել, որպէս զի նրանք կոլեկտիվ եղանակով մշակվեն։ Բայց պարլամենտը չէր ընդունել այդ առաջարկը, այլ ընդունել էր արմատական մինիստրութեան ծրագիրը, որի համաձայն ամեն մի գիւղացու տրվել էր մի փոքրիկ կտոր հող։

«Բայց որովհետև,—ասել էր այդ մասին ոգեշնչիտ պատգամաւորը պարլամենտում,—մենք հողատիրութիւնը չը պիտի կարողանայ մրցել խոշոր հողատիրութեան հետ, ուստի 10—15 տարուց յետոյ մենք հողաքաժիններ ունեցող գիւղացիների դրութիւնը նոյնը կը լինի, եթէ ոչ աւելի վատթար, քան հիմա *)»։

Սոցիալիստ պատգամաւորը սխալված չէր եղել։ Ներկայումս ռումանական գիւղացիների դրութիւնը, ինչպէս վերևում տեսանք, բոլորովին աւելի լաւ չէ, քան էր վերադրեալ ագրարային «ռեֆորմից» յետոյ։ Իբրև այդ ռեֆորմների հետևանք, այժմեան ագրարային շարժումները շատ աւելի ուժեղ և աւելի մեծ ծաւալ են ընդունել, քան էին 80-ական թուականներին։ Եւ այժմ նորից կառավարութեան գլուխ է անցնում արմատական մինիստրութիւնը։ Պիտի ուղղի արդեօք նա գէթ հիմա այն խոշոր սխալը, որ նա գործեց 80 ական թուականներից։ Այդ շուտով կերևայ նրա գործունէութիւնից։

Խ.-Ազատ.

*) Այս տեղեկութիւններն էլ պ. Թօթոմեանի յօդուածից ենք քաղել։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

22 մարտի

ՐՈՒՏԿԱ, (Ունգարիա) 21 մարտի։ Վարչական կայարանում արագ և ճանապարհորդական գնացքերը ընդհարվեցին։ Ճանապարհորդական վագոնները ջարդվեցին։ Ճանապարհորդներից 3-ը սպանված են, 23-ը՝ ծանր վիրաւորված։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 մարտի։ Մինիստրների խորհուրդը մարտի 20-ին որոշել է յատկացնել 8000 բուբլի Պետերբուրգում համակարգերական այգեգործական ցուցահանդես կազմելու համար։

ՎԱՐՇԱՎԱ, 21 մարտ։ Վիսլայի վրայով սկսվից նաւերի երթևեկութիւնը։

ԵԿԱՏԵՐԻՆՕՍԼԱՒ 21 մարտի։ Տեղումս մի ընկերութիւն է կազմվել, որը խաղաղ ճանապարհով կուռիւ է յեղափոխութեան դէմ։ Ընկերութիւնը գիւղերում, գիւղացիների մէջ պրոպագանդա է մղում և թռուցիկներ տարածում։

ՄՕՍԿՎԱ, 22 մարտի։ Ուսանողների ընդհանուր ժողովը որոշեց փակել համալսարանը մինչև մարտի 24-ը և առաջարկել պրոֆեսորների խորհրդին—ապահովել համալսարանի ներսում ժողովների և խօսքի ազատութիւնը և ճանաչել կենտրոնական մարմնի գոյութիւնը։ Նոր ժողովը մարտի 24-ից յետոյ կը լուծէ համալսարանի յետագայ գոյութեան հարցը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 մարտի։ Մարտի լոյս 22-ի գիշերը վախճանվեց 78 տարեկան, յայտնի բուսաբան, «Կոնտ Մուրլիկա» հէքիաթների հեղինակ պրոֆէսոր Վագնէրը։

23 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 մարտի։ Երդուեալ դատաւորները արդարացրին կօրէսպի Կիմիկեանցին, որ մեղադրվում էր 1905 թ. դեկտեմբերին «Ֆրանսիա» հիւրանոցում Կօրէսպի նախկին մինիստրի կեանքի դէմ մահափորձ կատարելու մէջ։

ՄՕՍԿՎԱ, 22 մարտի։ Համալսարանի խորհուրդը որոշեց փակել համալսարանը մինչև մայիսի 1-ը, իսկ քննութիւնները նշանակել մայիսին։

ԲՈՒԽԱՐԻՍՏ, 22 մարտի։ Ամբողջ երկրում կարգը վերջնականապէս վերահաստատվեց։ Զերբակալված են շարժման մէջ աչքի ընկնող մասնակցութիւն ունեցողները։ Զուրջկվոյի կալուածատէրերի և կապալառուների ժողովը վճռել է շնորհակալութիւն յայտնել կառավարութեան—ձեռք առած կորուկ և եռանդուն միջոցների համար։

ԲԵՐԼԻՆ, 22 մարտի։ Թէ ինչ վերաբերմունք է ցոյց տալու Գերմանիան Հաագայի կոնֆերենցիայի վերաբերութեամբ, Պետ. Հեռ. Գործակալութեան գործակալը արժանահաւատ աղբիւրներից տեղեկութիւն է քաղել, որ Գերմանիան ամբողջ ոյժերով ջանալու է անցկացնել ռուսաց ծրագիրը։ Եթէ բարձրանալու լինի սպառազինումը սահմանափակելու հարցը, Գերմանիայի ներկայացուցիչները կասեն, որ նրա համար ցանկալի են միջազգային իրաւունքի նոր դրական նորմաներ, իսկ անպէտք հարցերի քննութիւնը նա անօգուտ է համարում։ Ինչ վերաբերում է Իտալիային, պաշտօնական շրջաններում Իտալիայի Ֆրանսիայի և Անգլիայի պոչի, ետևից գընալը հասկանալի են համարում, սակայն ապասում են, որ Իտալիան գործէ իր դաշնակիցների հետ։

ԿՕՆՇՏԱԴՏ, 22 մարտի։ Արժանահաւատ աղբիւրներից բղխած այն լուրերը, որ վարժիչ-թնդանօթային զօրամասի կառավարիչ փոխ-ծովակալ Վերիկնը նշանակվում է սեւծովեան նաւատորմիղի հրամանատար, հաստատվում են։

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

Հիմնված 1880 թ.

(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)

ամեն օր, բացի կիրակի օրերից

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վերաբուժութեան, վենէրական (սիֆիլիս) փոքրանց. հ.։

Կ. Մ. ՋԻԿ-ՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ականջի և նեարդային։

Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։

Մ. Գ. ԱԻՆՏԻՄԵԱՆ—11—12 ժ. մարթու, վենէրական և վերաբուժութիւն։

Ա. Մ. ՓՈՒՐԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահար.։

Կ. Ի. ԴԶՆԻԼՈՎ—1—2 ժ. ականջի, քթի և կոկորդի

Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։

ԿԻՆ-ԲԻՖԵԿ Ա. Ի. ՇՁԵՐԲԻՆԻՆԱ—1½—2 ժ. մանժարբութեան։

Վճարը 30 կ.։ Հիւանդները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիում) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝

Բժշկապետ՝ Բ. Նաւասարդեան

Լոյս տեսաւ

ՍԵՂՐԱԿ ՄԱՆԴԻՆԵԱՆԻ

Կազմած

НАЧАЛЬНАЯ РУССКАЯ ХРИСТОМАТІЯ

ДЛЯ АРМЯНЪ

Դասաւանդութեան բացատրութիւններով

1. գրքոյկ

Գրքոյկը նոր ծրագրի համեմատ նշանակված է ծխական ուսումնարանների 3-րդ բաժանմունքի համար, բայց առայժմ կարող է գործածվել նաև 4-րդ բաժանմունքում կամ թեմական դպրոցի առաջին դասարանում։ Յարմար է և տնային ընթերցանութեան համար։ Ռուսերէնի դիմաց դրված է և հայերէն թարգմանութիւնը։

Գրքի բովանդակութիւնը

Գրագիտութեան վարժութիւններ

Օրգանական մեթոդ § 3։

Մայրենի լեզուով նախապատրաստութիւն այբուբենի բաժնում § 4։

Անդիր անել տալը. բանաւոր վարժութիւն § 4։

Գրաւոր վարժութիւն § 5։

Ընթերցանութեան վարժութիւն § 6։

Հատուածների ուսումնասիրութեան հրահանգութիւններ

Անուղղակի ներգործութիւն՝ Թուաբանութիւնը և Դերերի բաշխումը (բացատրութիւններ 1—14 տող.)

Օժանդակ բառերի փոխարէն բուն յայտարարները (15—32)։

Օրգանական մեթոդով կարդացնելը (33—49)։

Զօրութեամբ իմացվածի բացորոշ արտայայտութիւնը (50—80)։

Սեղմ ոճ (81—106)։

Նախադասութեան քերականական լուծումն և հարցական խօսքից դրական ասութիւնը (107—138)։

Ասակցական ձեից պատմական ասութիւնը (139—190)։

Արձանացումն կամ գրի առնելը (запись)։ (191—202)։

Արտաքրութիւն (577—618)։

Թելադրութիւն (619—712)։

Հէքիաթի քարտէզը։

Գինն է 55 կ.։

Դիմել՝ Тифлисъ, Книжный магазинъ «Гуттенбергъ» Г. И. Галустянцу. 1—5

ՀՐԱՒԷՐ

Մողնու ս. Գէորգ եկեղեցու երէցփոխի եռամեայ տարին լրացած լինելու ա՛ռթիվով, ամսիս 25-ին, կիրակի ժամը 12-ին, երրորդ անգամ յիշեալ եկեղեցումը ժողով է լինելու նոր երէցփոխ ընտրելու, ուստի 21 տարին լրացած բոլոր երկսեռ ծխերին պատիւ ունեմ հրաւիրել եկեղեցի ընտրութեանը մասնակցելու։

Թիֆլիսի Գործակալ ա. մասի՝

Գրիգոր աւագ-քահ. Մանդակունի

(շ. կ.) 1—2

ՀՐԱՒԷՐ

Նորաշէն ս. Աստուածածնի եկեղեցու երէցփոխի, պ. Ստեփան Մնացականեանի հրաժարականի պատճառով, կիրակի, ամսիս 25-ին, ժամը 12-ին, յիշեալ եկեղեցումը լինելու է երկրորդ անգամ ընտրութիւն նոր երէցփոխի և ծխական դպրոցի հոգաբարձական անդամի։ ուստի պատիւ ունիմ հրաւիրել 21 տարին լրացած երկսեռ բոլոր ծխերին՝ նոյն օրը և ժամին շտապեն եկեղեցի ընտրութեանը մասնակցելու։

Գործակալ ա. մասի Թիֆլիսի՝

Գրիգոր աւագ քհ. Մանդակունի

1—1

ՀՐԱՒԷՐ

Մողնու ս. Գէորգ եկեղեցու բոլոր՝ 21 տարին լրացած երկսեռ ծխականները հրաւիրվում են վաղը, կիրակի, ամսիս 25-ին, առաւօտեան ժամը 12-ին եկեղեցի, ուր լինելու է ծխականների ընդհանուր ժողով, նոր երէցփոխ ընտրելու համար։

Այս ժողովը նախորդի շարունակութիւնն է համարվում։

1—1 Սիմէօն աւագ քհ. Զմշկեանց

Опытный учитель

готовитъ по курсу среднеучебныхъ заведеній, къ поступленію въ Юнкерское уч., Кадетскій корп., на званіе аптекарскаго учен., на-вольноопр. Троицкій пер, (близъ почты), 4, парадный ходъ, кв. Штейнберга; спросить Соломана Лазаревича. Видѣть 11-5 ч. дня.

1—1

ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ԴՆԱՑՔՆԵՐ

(Թիֆլիսի ժամանակով)

Թիֆլիսից դէպի Բաթում

Պօստատար 1 ժամ 24 ր. ցերեկվայ

Մարդատար 8 » 5 » առաւօտեան

» 11 » 8 » գիշերվայ

Թիֆլիսից դէպի Բագու

Մարդատար 9 ժամ 13 ր. առաւօտ.

Պօստատար 7 » 48 » երեկոյեան

Մարդ-ապրանք. 11 » 38 » »

Թիֆլիսից դէպի Երևան

Պօստատար 12 ժամ 40 ր. գիշերվայ

ԲԺՇԿԱՊԵՏ

Մ. Պ. Զահարբէգեանց

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐ՝

ՆԵՐՔԻՆ ԵՒ ԶՂԱՑԻՆ

ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Ընդունելութիւնը { առաւ. 10—12 ժ.

ՏԷԼԷՖՕՆ № 1087

Սօլոլակ, Լերմօնտովսկայա փող., 16.

(ա. օ.) 127—150

ԲԺՇԿԱՊԵՏ

Տ. ԳԷՈՐԳ-ԲԻԳԵԱՆ

ԱԶՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Ընդունելութիւնն ամեն օր

Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12

Երեկոյեան » 5-ից մինչև 7

Վելեմինսկայա փողոց № 8.

(ա. հ. շ.) 42—100

Ներսիսեան Հայոց Հողեւոր դպրոցի հոգաբարձութիւնը

յայտարարում է, որ էկստերների (աւարտական վեցերորդ դաս.) քննութիւնները տեղի կունենան տարեկան մի անգամ, միմիայն մայիսին։ Իսկ ժամանակագրական եօթերորդ դաս. էկստերների քննութիւնները բոլորովին չեն լինելու։

(ե. հ. շ.) 2—3

Լոյս տեսաւ

ԲԱՄԱԼԵԱՆՑ Ս-Ի

ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱԿՆԵՐ

գիրքը։ Թուղթն ընտիր, տպագրութիւնը սիրուն, 112 էջ։

ԳԻՆՆ Է 25 ԿՕՊԷԿ

Հարցնել Թիֆլիսի գրախանութներում, ուր վաճառվում են նոյնպէս. 1) Խուլ Խաչիկ 25 կ.։ 2) Քաջ Ադամ 25 կ.։ 3) Ժամանակը ոսկի 40 կ.։ 4) Սրբոց 9 պատմութիւն 40 կ.։ 5) Սասունցի Ծռէնա 30 կ.։ 6) Երկասիրութիւններ 50 կ.։ 7) Գալօ ափօ, Խաչան 12 կ.։ 8) Ատուած չը ճանաչող 10 կ.։ Շէն թագաւորի աղջիկ 25 կ.։ 11) Երկու աղբերացեղ 30 կ.։ 12) Հէքեաթներ 30 կ.։ 13) Անմեռ աշխարհ 8 կ.։ 14) Ատուած աղքատի կերպում 20 կօպէկ։

Մեծ գումարով գնողները դիմելու են Բամալեանց Ս-ին՝ Ներս. դպրանոց։

(ե. հ. կ.) 3—20

ՍԵՆ-ՍԵՆ

Ծրարը 20 կօպէկ։

Ամերիկան մաստակ և կանֆէտներ։

Վ. Ա. ՃԱՌՊՈՒՄ Է

բոլոր դեղատներում և

լաւագոյն խանութներում։

Գլաւոր պահեստն է՝ «Единственная торговля по Американски.

Միքայէլեան փող. № 96.

(կ. չ. ու.) 7—10

XXV ԱՂԲԻՒՐ XXV

և

XVա ՏԱՐԱԶ-ԳԵՂԱՓՆՋԻԿ !

Հրատարակվում են ճոխ և բազմաբովանդակ։ Աշխատակցում են մեր անուանի մատենագիրներ, բանաստեղծներ, մանկավարժներ, արուեստագէտներ և լրագրողներ։ Կլիշէները պատկերների պարտաւորում են Եւրոպայի նշանաւոր գործարաններում։ «ԱՂԲԻՒՐԸ» և «ՏԱՐԱԶ»-«ԳԵՂԱՓՆՋԻԿԸ» տպագրվում են ընտիր թղթի վրա, իլիւստրասիօնի մուրով. նորագոյն տառերով, զարդերով ու իրանց թանգագին յաւելուածներով, անակնկալ պրէմիաներով, տարեկան 5 ր. բաժանորդագրով, (արտասահման 10 բուբլի)։ հրապարակի վրա չունեն մրցակից։

Սպառիկ բաժանորդագրութիւն չէ ընդունվում։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція «Агбюръ» կամ «Тараз» Tiflis, Redaction «Agbür» կամ «Taraz»։ 3—15

ԲԺԻՇԿ

Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ

Մասնագէտ ՆԵՐՔԻՆ և ԵՐԵԽԱՑՈՑ հիւանդութիւնների առանձնապէս ստամոքսի և աղիքների հիւանդութիւններ։ Ընդունելութիւնը ամեն օր 12—1 ժ. առա. և 5—6 երեկ.

Միքայէլովսկի պր. տ. Ճավճանիձէի № 36

93—100

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Ա. Ջանեեանի

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Ի ՊՐԱԿ

Դիմել՝ գրավաճառներին

3—5

Գանձակի Ղարադաղլու գիւղացի Գէորգ, Կարապետ, Հեղինէ և Ղազար Ղազարեանցները, Սարգիս և Զանի Յարութիւնեանցները, վշտակոծ սրտով յայտնում են բարեկամներին և ծանօթներին՝ առաջինը իր որդու, երկրորդը և չորրորդը քրոջ, երրորդը տալոջ, իսկ վերջինները իրանց քրոջ որդեգրուհու.

ՍՈՆԱ ԳԷՈՐԳԵԱՆ ՇԱՆԼԱՄԵԱՆՑԻ

վաղաժամ մահը, որը տեղի է ունեցել Բագումում ամսիս 18-ին, ծննդաբերութիւնից։ Թաղումը տեղի ունեցաւ մարտի 20-ին։

1—1

Բացված է բաժանորդագրութիւն

ՀԱՅԵԼԻ

Գեղարուեստական եռգիծաբանական պատկերազարդ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ,

որը երբեմնապէս լոյս կը տեսնի «Հայելի յաւելուած» անուան տակ։

Տարեկան բաժանորդները կը ստանան՝

1) 50 № «Հայելի»։ 2) 12 գեղարուեստական նկարներ, որ տարվայ վերջը առանձին ալբոմ կը կազմեն։ 3) 2 մեծադիր գունաւոր պատկեր հայկական կեանքից (75×100 սմ.) (Առաջին պատկերը կուղարկվի Զատկական համարի հետ, իսկ երկրորդը սեպտեմբերի սկզբին)։ 4) 1 պատի տախտակ պատկերազարդ Օրացոյց 1908 թ.։ 5) 1 յայտնի հայ երգիծաբանների խմբական նկարը։

Բաժանորդագրութեան տարին է նոյեմբերից նոյեմբեր։

Տարեկան գինը պրեմիաներով Թիֆլիսում՝ 4 ր., դուրսը՝ 5 բուբ.։ Կէս տարին՝ 2 ր. դուրսը՝ 2 ր. 50 կօպ.։ Արտասահման՝ տարեկան 6 բուբլի, կէս տարին 3 բուբլի։

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐԸ ԱՄԵՆ ՏԵՂ, ԹԷ ԹԻՖԼԻՍՈՒՄ ԵՒ ԹԷ ԳԱՒԱՌՆԵՐՈՒՄ ԱՐԺԷ 10 ԿՕՊԷԿ

Մինչև այժմ լոյս են տեսել և ուղարկվել բաժանորդներին հետևեալ գեղարուեստական նկար պրէմիաները. 1) Հաւատ-յոյս-սէր 2) Առասպելին եւ 3) Խաղաղութիւն Նոր բաժանորդները կը ստանան բոլոր լոյս տեսած համարները և պրեմիաները։ Պատրաստվում է ապագրութեան համար. 1) Գեղարուեստական նկար պրէմիան № 4—ԳԵՐԻՆԵՐ և զատկական պրէմիան մեծադիր գունաւոր, (14 գոյներով) 75—100 սանտիմ մեծութեան, ընտիր թղթի վրա, շքեղ նկարը—ՍԱՊԵՆԻԿ ԵՒ ԱՐՏԱՇԵՍ Բ.։

ԾԱՆՕԹ.—Գեղարուեստական նկար պրէմիաներ առանձին արժեն հատը 50 կօպէկ։ Մեծադիր գունաւոր նկար պրէմիան 3 բուբլի։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція «Аели», Дворцовая ул. № 3 կամ Tiflis, Rédaction du Journal «Haeli»։ Լոյս է տեսնում հինգշաբթի օրերը։

Խմբագիր՝ Վ. Պետրոսեան, Հրատարակիչ՝ Բ. Ճէպէյեան

(եր. հինգշ. և շաբ.) 43—8

Մի երիտասարդ,

որը ծանրաբեռնված է 13 հոգուց բաղկացած ընտանիքով և չունի ոչ մի նիւթական միջոց, գտնվել չը հաց հայթայթելու, որոնում է գործ. գիտէ ռուսերէն և հայերէն մաքուր. կարող է մանել բրբև գործակատար։

Հարցնել՝ Հաւաքարար, Կախեթինսկի հրապարակ, Աբովեանների գիլիժանների գրասենեակը։ 2—3

ԶՈՒԲԱԼՕՎԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՒՆ

(Կիրօչնայա)

Ժողովրդական համալսարան

Կիրակի, մարտի 25-ին

I

Հայերէն լեզուով Լ. ԲԱԲԱՅԵԱՆ

Կը կարդայ դասախօսութիւն

„Ժողովրդական համալսարանները Արևմտեան Եւրոպայում“

Սկիզբը 11 ժամին առաւօտեան

II

Ի. ԿԻԶԿԻՆ

Ռուսերէն լեզուով կը կարդայ դասախօսութիւն Երկիրը, Արեգակը, Մոլորակները, Աստղերը և Գիսաստղերը»։

Սկիզբը ժամի 1-ին

Տոմսակները ծախվում են մուտքի մօտ։

(հ. շ.) 2—2

Վաճառվում են

ՑԱՐ. ԵՍԱՅԵԱՆԻ

ՀԱՅ ԿՏՐԻՃՆԵՐԸ

Պատկեր հայ թուրքական կռիւներից, գինը 7 կ.

Միեւնոյն դազաղում

Պատկեր հայ-թուրքական, կռիւներից պատկերազարդ, գինը 7 կօպ. նոյն հեղինակի Մացեալ բոլոր աշխատասիրութիւնները կարելի է ստանալ՝ Թիֆլիս «Գուտտենբերգ» գրավաճառանոցից կամ հեղինակից, Թիֆլիս 5 գգ. Могилинская ул. № 7։

Շուտով լոյս կը տեսնի «Մշտական զօրք և միլիցիա» Պիմէնովի։ օրմ. 5—5

„ՍՕՏՐՈՒԳԴԵԻԿ“

ՄԱՐԻԱՄ ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆԻ

Գրավաճառանոցը

(Բազու, Օլգինսկայա № 9)

Ընդունում է ամեն տեսակ հրատարակութիւններ կոմիսիայով և պահեստի համար։ Պ. պ. հրատարակիչներին խնդրում ենք ծանօթանալու համար ուղարկել իրանց հրատարակութիւնները և պայմանները։

(շ.) 15—50

(մարտի 24, ապր. 17) 1—2

1907 թ.

„ՆՈՐ-ԱՂԽԱՏԱՆՔ“

Ժողովրդական-հասարակական-տնտեսական

տարեգիրք

«Նոր-Աշխատանքը» նուիրված է լինելու հայ աշխատաւոր գիւղացիութեան և գիւղական պրոլետարիատի տնտեսական-իրաւական շահերի պաշտպանութեանը։

«Նոր-Աշխատանքը» առաջնակարգ տեղ է տալու մեր գաւառի կեանքի ուսումնասիրութեանը։

«Նոր-Աշխատանք»-ում աշխատակցելու են նրա ծրագրին ու ուղղութեանը համակրող հայ ինտելիգենցիան։

«Նոր-Աշխատանքը» իր տարեկան բաժանորդներին տալու է ձրի չորս-գիրք նուիրված գիւղատնտեսութեանը և ժամանակակից կեանքի իրաւական հարցերին։

ԲԱԺՆԵԳԻՆԸ

Ռուսաստանում		*Արտասահմանում*	
Տարին.	4 ր.	Տարին.	18 ֆր.
Կէս տարին. . . .	2 ր. 50 կ.	Կէս տարին. . . .	10 ֆր.

Հասցէն՝ Тифлисъ, редакцію журнала «Норъ-Ашхатанкъ», Бебутовская № 50.

9—0 ա. Խմբագիր-հրատարակիչ՝ Վիրգինէ Աթանասեան

Տպարան «ՀԵՐՄԷՍ» Հնկ.

Электропечатня Типографскаго Т—ва. «ГЕРМЕСЪ» Мадатовская № 5.